


10263/1978

# Puapū

12

1978



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Յ. ՕՇԱԿԱՆ	. . . . .	Պատասխանը
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	. . . . .	Յեամիջօրէի մտարում՝ հումերական քանազարհին
»	» . . . . .	վերանորոգ քանաչողութեամբ
Ն. ՎԻՐԱՊԵԱՆ	. . . . .	Այսինչին փեսան...
»	» . . . . .	Աստուծոյ զոհը...
Շ. ՔԵՕՐՕՂՎԵԱՆ	. . . . .	Գուն Տալիդա, ես՝ Ղազարոս
* * *	. . . . .	Ուիլերմ Սարոյեան
ՈՒ. ՍԱՐՈՅԵԱՆ	. . . . .	Կոտրած անիւր
»	» . . . . .	Գեղեցիկ սպիտակ ձիուն ամառը
Ն. ՉԱՐԵՈՒՏԵԱՆ	. . . . .	Ուիլերմ Սարոյեան
* * *	. . . . .	«Հանդիպումներ»էն
Ա. ՈՍԿԵՐԻՉԵԱՆ	. . . . .	Օջական՝ իր մտերմութեան մէջ
* * *	. . . . .	Մտաւորականի մը մտեր
* * *	. . . . .	«Բային»ի 1978ի բովանդակութեան ցանկը

# Բազմ

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԺԷ. ՅԱՐԻ, ԹԻՒ 12 Գ Ե Ե Տ Ե Ր Բ Ե Ր 1974 ԳԷՍՐԱԻԹ

Յ. ՕՇԱԿԱՆ

### Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ը

Էջ 59 - 65

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ԱՐՄԱՆ ԵՒ ՄԱՐՏԻՆ

ԱՐՄԱՆ. — Նախ, եկաք բարավ: Ու տաանց աւերարդ շեղումներու, ուղղակի դործին, որուն համար ես եկեր: Յետոյ, լո՞ւրջ ես:

ՄԱՐՏԻՆ. — Օ՛, կեանքին երկաթ բառերն են բառերդ, Արման: Ձեռն դարձաւ նար: Մեծ դործիդ կրակն է, որ քեզ ալալէս խտացուցեր է: Կը հարցընես իմ լրջութիւնը: Բայց դիտե՛ս, թէ իմ անյետաձգելի դրողումներէն տա՛հ մը դատուելու մղող դիտաւոր ազգակը քու անձին դոյութիւնն է այս դործին ներքը: Ամէն բան, մանրամասն, կարգացի տեղեկագիրներուն մէջ: Դուն ես չողենաւերուն հարցը դիւրացնողը:

ԱՐՄԱՆ. — Ձե՛ժ ամբաստանուած, որ Ամերիկաներուն տուեր եմ նաւերը:

ՄԱՐՏԻՆ. — Դէզերով թուղթ, ուր չես տեսներ խելքին բաժինը: Դուն ես ծախքերը հողացողը: Չունեցողներուն՝ հասնողը:

ԱՐՄԱՆ. — Այո, ամէնը մանրամասնութիւններ են, Մարտին, հազիւ յիշելի մեր տեսակցութեան մէջ: Տեսակ մը պարբերական հպերանութիւն: Հորս մօտ այս կերպ կենալ մը ժողովուրդին դէմ, թերեւս աւելի առհաւական է: Ի վերջոյ արեւմտահայերու մէջ երկու կազմակերպութիւններ գիմացան մեր բոլոր ազգամերուն: Անոնցմէ մէկն է մեր լրագրութիւնը, երկրորդը՝ մեր աղքատախնամները:

**ՄԱՐՏԻՆ**. — Աւրախ եմ, որ պահած ես մտքիդ ուժն ու սրտիքներ, դէպքե-  
 րը պիտակեիր շնորհն եւ ճիշդ տեսնելու ասպանող: Գործիւ տնտար  
 ընդարձակութիւնը չէ տարողնած հոգիիդ լուսպոյն մտոր: Ձեռ ու-  
 դեր, որ կատարուածին մէջ այսքան քիչ, թեթեւ արժեւարումներ առ-  
 կայն քու իրական ու չեմ ինտայիւր բարձր՝ մեծ բաժինը:

**ԱՐՄԱՆ**. — Ի՞նչն է կատարուածը:

**ՄԱՐՏԻՆ**. — Օ՛, սկիզբ մըն է, Արման: Աւ յաջող, փոտաւոր սկիզբ մը: Գաղ-  
 թահայու մտածում է ներդադիւր մասնատրել, սանկ ու նանկ հաշիւ-  
 ներու յարդարում նկատել: Մեղճ ու պատաս կուտակցական հակամար-  
 տութիւններ պատճառ են այդ մտածումին ծնունդին: Երեսունի մէջ  
 ներդադիւր ո՛չ միայն Սփիւռքին արմատական ջնջումն է, այլև՝ հայ  
 ժողովուրդին վերջնական ծնունդը, պատասարութիւնը:

**ԱՐՄԱՆ**. — Մտկուայի՞ մէջ:

**ՄԱՐՏԻՆ**. — Թէեւ հեռու գաղիւր, բայց կը հետեւի մտքիդ: Սարիսյ, Ամե-  
 րիկայի, Երուսաղէմի մէջ Աշոտ Արմանը տարբե՞ր մարդ մըն է: Ո՛չ,  
 անշուշտ: Սորհրդային հայրենիքին մէջ ալ հանրապետութեանց ու-  
 դեպքերը իրարու նման են, ինչպէս իրարու նման են դրամի հայրենի-  
 քին մէջ գանազան շուկաներ վարող ուղեւորները: Այս մասին ոչ մէկ  
 կտակած: Կը դպա՞մ մեծութիւնը կրողին:

**ԱՐՄԱՆ**. — Ձգապի, թէ որքան անձանօթ է այդ մեծութիւնը ձեր դործաւոր-  
 ներուն մեծապոյն մասին:

**ՄԱՐՏԻՆ**. — Կ'աղնարկես հուանարար ներդադիւր դարձին շարժ դադութե-  
 րու մարդոց: Տեղեակ եմ բախումներու: Բաժնեք եմ հետեւն գառ-  
 նութիւններից հետարներէն, աղղասէրներէն: Բայց ցուեր եմ վրաց,  
 որ թանձր մշուշը չես յաջողեր պատուել քեզ մեղմէ բաժնոց: Բարբ այդ  
 մեծխօսիկները մեր կարգին մէջ կը դառնան ամէնէն օգտակար դոր-  
 ծաւարները մեր աստղելութեան: Չանդուածը մարդարէներու, հե-  
 տարներու պէտք ունի եւ ոչ թէ դիտաններու, իմաստասէրներու: Յե-  
 տոյ, հոսհոտութիւնը երեսնական սպրանք չէր:

**ԱՐՄԱՆ**. — Մի խօսիւր շարժող բանիք է, մա՛նուանդ փոքր մարդերէ: Կու գան  
 մեծ, խուտրակուտ Անձանօթէն, սրուն վրայ մեր լսածները վեր կը  
 մնան մեր երեւակայութեանէն: Վատահ կրնաս ըլլալ, որ ամենախորունկ  
 հետաքրքրութեամբ ահանջ պիտի տամ լուսարանութիւններու: Գործ-  
 ւար չէ ինձի հասկնալ հարարբձունները, ճատախօսները, վարժապետ-  
 ները, պարզ արհեստաւորները կամ մայրանդ մատարականները:  
 Բայց դժուար՝ հասկնալ մարդեր, դիտուն, յանդուղն, միտքը ամէն  
 կազանք փոքնող նեատը, ինքնապլուխ ու ինքնահաւան — այսինքն՝  
 որակումներ, որոնք ամէնէն դէշը կը նշանակեն ձեր կարգէն մէկու  
 մը վրայ: Ճակատողիդ այսպէս տեղատրուած: Ձէիր կրնար շատ-  
 սապլլ, Փարիզէն ետք:

**ՄԱՐՏԻՆ**. — Առաջին տարին միայն: Եւրոպայէն անմիջապէս վերջ, խորհրդ-  
 դային այդ կարդալատհութիւնը, ստոն լրջութիւնը, մա՛նուանդ արազ  
 ու վճռական կամեցողութիւնը ծանր ճնշեցին, բայց ճնշեցին իմ կա-  
 կուղ մասերու:

**ԱՐՄԱՆ**. — Մեղքոնք մը. կրցածիդ չափ լսուերը հաշա, մօտիկ ըրէ արեւ-  
 մըտեան մտածողութեան: Գծուարք, ինձի, օրինակի համար, թախան-  
 ցումը ընել իմաստին, զոր կը հաւատամ, թէ կը զնես կակուղ մտտե-  
 րուդ մէջ:

**ՄԱՐՏԻՆ.** — Այնքան ալ հետո չենք իրարմէ: Պէտք է լաւ յիշես, որ Փարիզ ունէինք մեր լրջաթեան բնօր՝ կիրքը մեզմէյու համար, մեզի ներած թեթեւութիւններ: Նկարահանողէս մը, ներկայացում մը, տկարեմահան բնօրհետութիւններ կամ համբաւի հասած գոտախօսանքէք քոնքն-լաւաններ քու կարմէկ կ'որակուէին թեթեւացում: Ահա՛ կակուզ մասերը միտքի:

**ԱՐՄԱՆ.** — Բայց դատախօսութեանց, քարտի, մեր բաստիք՝ յիշուականութի դատական հայրենիքը գարձած է ձեր երկիրը, այլ մարդին վրայ Ամերիկան իսկ դերացանցոյ:

**ՄԱՐՏԻՆ.** — Կ'ընդունիմ դերացանցութիւնը: մ'չ միայն ընկալի մարդին մէջ, այլեւ՝ ամէն մարդի վրայ: Միայն իտրէնէ, որ հարիւր տարիներու աշխատանքի մը պտուղն է մեր հայրենիքին Սորհրդային Միութիւնը: Խօսքը ինքնարեւարար կը սարսոցնի՝ այլքան բնօրհետ իրողութիւններ նոյնիսկ անուանելու տակն: Աս ես գիրքը գրելու չեմ եղած:

**ԱՐՄԱՆ.** — Կ'ը վախճեն:

**ՄԱՐՏԻՆ.** — Եկեր եմ Սփիւսքը ջնջելու իրբեւ սղբերցութիւն: Ամէն ինչ, մտածում, թերագրանք պիտի տա ինծի այս մարդէն: Ոչ ոքի վրայ՝ այն վաստահութիւնը, զոր ունիմ քու խօսքիդ, խելքիդ, նոյնիսկ սրբտիդ, հակառակ մեծատարած չարախօսութեանց: Երեւան, այսինքն՝ ներկայութի կեդրանական կամբռէն կը բաժնէ իմ վաստահութիւնս, ձեր տունին վրայ:

**ԱՐՄԱՆ.** — Ձէ՞ք իրաչիր:

**ՄԱՐՏԻՆ.** — Որոնցմէ՞. ի՞նչ բանի համար: Ես համարում եմ, որ Արման Աշտուր եւ Մարտին Մարտինեանը նոյն նկարագրիները, նոյն կիրքերն են: Անոնց աշխատանքի հսկայ կարողութիւնը, իր արդիւնքին մէջ՝ դա՛րձեալ նոյնը: Տարբերութիւնը կը սկսի այդ արդիւնքը բաշխելու, օլտադործելու եղանակին մէջ: Ու կը համարձակիմ բսել, որ այդ բաշխումը ինծի համար չէ առաջնակարգը: Ստեղծումը. ահա՛ տալլին կարգի իրականութիւնը:

**ԱՐՄԱՆ.** — Ձեր տեսքանները չե՞ն գայթակղիր նման դասաւորումէ մը:

**ՄԱՐՏԻՆ.** — Կ'ընդունիմ, որ բոլորովին ձերբարարաւորած ուղեղներու գործ է այս դասաւորութեանէն շատապիլը: Կու գայ օրը, երբ մարդիկ իրենց բաշխումը պիտի ստորագրասեն իրենց ստեղծածէն:

**ԱՐՄԱՆ.** — Նոյն արժանատական մտածողն ես:

**ՄԱՐՏԻՆ.** — Ըսի, թէ թօթափած եմ վրայէս իմ բոլոր կակուզ մտերը, երեւեալու, սպասելու, ունայնամիտ ըլլալու տկարութիւնները: Ոչ մէկ արատքին ազգակ կը յաջողի թեթեւ մը իսկ ձեւի իմ կամքին սղաքը: Սմբողջութեամբ աշխատանք:

**ԱՐՄԱՆ.** — Ո՞չ մէկ սիրփանք:

**ՄԱՐՏԻՆ.** — Բայց սիրփանքի ի՞նչ կարիք, երբ իմ աշխատութիւնը դիւ վերածել է մշտապաւ հնոցի:

**ԱՐՄԱՆ.** — Փարիզի Մարտինը: Բայց հան սիրփանքը կար:

**ՄԱՐՏԻՆ.** — Կ'ին՞՞ք:

**ԱՐՄԱՆ.** — Գուն ես ըսողը:

**ՄԱՐՏԻՆ.** — Կ'ինը կերք է, ու իբր այդ՝ կրակին արծարծիչը:

**ԱՐՄԱՆ.** — Փարիզէն տարբերութի՞ւն:

**ՄԱՐՏԻՆ.** — Անհո՛ւն: Կը յիշես, թէ ինչ արտաւ նանրանք մըն էր կ'ենեբու ետեւէն ըլլալու, դանսը նուաճելու մէջ գրուած վաստակութիւնը:

Ու մենք ջնջած ենք տախկա :

ԱՐՄԱՆ. — Նոյն մտածումը Սեւանին քով :

ՄԱՐՏԻՆ. — Հասարակաց պայտւում է տախկա եւ ոչ թէ մտածում : Ի սկզբանէ էր չգուտակը, Եթէ կ'ընդունես այս շարափոխութիւնը : Քօթուած եմ ինձմէ ձեր, արեւմտեան մշակոյթին ամէն արտաքին, փայլուն յատկանիշները :

ԱՐՄԱՆ. — Որդեպրելու համար արեւելեան միսքիէր : Դո՛ւն ալ արեւելապաշտ :

ՄԱՐՏԻՆ. — Կ'աճապարես : Գիտես, թէ որքան խորունկ էր, Փարիզ, իմ արհամարհանքը պեղազաններէն, մշակոյթի տեսութիւններէն, ոճապաշտներէն : Որքան ժամեր ենք վառներ Արեւելքի եւ Արեւմուտքի սին հակադրութիւնը վերլուծելու միտքի մարդին վրայ : Ու բոլոր իզուերը, որոնք երկու պատերազմներու միջոցը ստացնեցին ծիծաղելիքն, անդութիւն, յիմարանքին սարգերովը : Բայց այդ հակադրութիւնը աւելի քան խոր է եւ իրաւ միտքի, նիւթի, վայելքի մարդերուն վրայ : Պիտի գգուշանամ, կրցածիս չափ, քաղաքական տեսութիւններու թոճուրհէն : Կը դոճանամ պիտեւ տալով, որ մարդկութեան ինչ տասներորդը կ'աշխատի հաճոյքը հայթայթելու համար մնացած մէկ տասին : Ահա՛ իմ Արեւելքը եւ Արեւմուտքը : Սորհրդային պարտաբարանութիւնը, իր պարպոյցն եղբերուն վերածուած : Ու այդ համեմատութիւնը դա՛րձեալ՝ մեր գերազոյն առաջադրութիւնը :

ԱՐՄԱՆ. — Որքան տաք կը խօսիս :

ՄԱՐՏԻՆ. — Մեր ամէն մէկ բառին ետեւ մենք անկաժէ ըրած ենք մեր մարմինները : Եթէ արեւելեան միտքիք որակումը կը հետադնդէ սա վիճակը, չունիմ առարկութիւն, քանի որ դիտեմ, թէ նայն ուժգնութեամբ հայրը ինքզինք անկաժէ կ'ընէր իր ամէնէն փոքր իսկ ձեռնարկներուն մէջ : Ու կը մտածեմ հանդիարէն քեզի : Ներդադրի մէջ հոգեկան սա լայնքը միտքիք մըն է, զիջելով վրայէն իր որակականը, արեւելեանը կամ արեւմտեանը :

ԱՐՄԱՆ. — Յետո՞յ :

ՄԱՐՏԻՆ. — Յետոյ ա՛յն, որ Մարտին Մարտինեանը երկաթի պէս միտքի մարմին մը ունի, որուն վրայ անապոյեցիկ են ձեր քաղաքակրթութեան անուշիկ-անուշիկ բոլոր թթուները : Եկեր եմ անասան հաւաքող ի՞մ ժողովուրդը սպասելու :

ԱՐՄԱՆ. — Դատական փրկի՞չը :

ՄԱՐՏԻՆ. — Անցողակի թերադրանք մը քեզի : Մեր հանդիպումը պիտի ընես մասնաւոր արարողութիւն մը :

ԱՐՄԱՆ. — Կը վախցնես, դիտե՞ս :

ՄԱՐՏԻՆ. — Քիչ հակում ցոյց պիտի տաս որամտութեան, հեղմանքի :

ԱՐՄԱՆ. — Բայց դուն մարմնացած քաջքուքն էիր ուսանողութեան շրջանիդ :

ՄԱՐՏԻՆ. — Խորունկ է իմ փոփոխութիւնը : Գրեթէ կ'առեմ բոլոր թերահաւատները, իմաստասերները, սկիզբիկները, տեսաբանները : Քանի՛ տարի է մտայեր եմ երեք շորրորդը : Մտայեր մա՛նաւանդ Մարտինի չհաւանելու, ծաղրելու հզօր սխարժակները : Այնքան մանր է մեզ շրջապատող դժբախտութիւնը : Ու որքան քիչ մեր իրուումը՝ այդ պրժբախտութեան զոհերը ծաղրելու :

ԱՐՄԱՆ. — Դրական աշխատանքին կնի՛քը :

ՄԱՐՏԻՆ. — Գոյի ուղած պատճառը : Բայց մա՛նաւանդ մտածէ մարդկօրէն :

Ամէնէն տաջ ու ամէնէն աւելի պիտի գործվիս քու ժողովուրդիդ ճա-  
կատագրէն :

ԱՐՄԱՆ .— Հո՞ն ուլ :

ՄԱՐՏԻՆ .— Հո՛ն մանաւանդ : Տաճկի Հայաստանը աւերակներէ քիչ կը տար-  
բերէր , երբ սղջ էր վրան քու ժողովուրդը : Ռուսին Հայաստանը չէ-  
նութիւն էր : Ու Փարսիցէն վերջը երբ մտայ հոն , մարդերը անհուն սղ-  
րերդութիւն էին : Դուն սրբաբաւոր ես մեր , այսինքն՝ երիտասարդի  
սւղեգով դատել կատարուածը : Ահա թէ ինչու ըլլամ մտցած իմ ան-  
խտան հետաքրքրութիւնները : Դուն կ'սպարիս մշակոյթի մը մէջ , ուր  
կայրութիւններ կը հիմնեն մարդիկ , իրենց շահերուն համար : Մենք ,  
այսինքն՝ հայրենիքին երիտասարդ պիտունները , որոշած ենք ընել մեր  
երկիրը այնքան բարգաւաճ , որ իր պատկները կարենան անցընել ի-  
րենց կեանքը — հեքլութիւն բառերովը — եզին ու մեղրին մէջ : Ու պի-  
տի դայ այդ ոսկեգարը :

ԱՐՄԱՆ .— Դարերուն քայլովը :

ՄԱՐՏԻՆ .— Ո՛չ , տարիներուն քայլովը : Ձեմ գովեր քեզի մեր բրածները :

ԱՐՄԱՆ .— Ծնորհակալ եմ :

ՄԱՐՏԻՆ .— Բայց պիտի պարզեմ ասջեւզ մեր ընելիքները :

ԱՐՄԱՆ .— Երազները , երբ դեղեցիկ են , կրճան հանդուրժուիլ :

ՄԱՐՏԻՆ .— Պիտի բնենք զբախտ :

ԱՐՄԱՆ .— Ազգային պետի՞նն է ասիկա , միջազգայինէն տաջ :

ՄԱՐՏԻՆ .— Բառերու հետ խաղալը ա՛լ իմ գործը չէ : Իմ ուժերը առայժմ  
մեր երկիրը սնին իրենց փորձափայր : Տարիքին մէջ ու հետ ամբողջ  
աշխարհը :

ԱՐՄԱՆ .— Օրիորդ Սեւանին հետ պայման ենք բրած նորութիւնը : Պիտի  
խնայեա ինձի իմ դիտցածներս :

ՄԱՐՏԻՆ .— Գիտցածներդ կա՛մ նախնական են , կա՛մ խեղաթիւրուած : Մու-  
ցիր Երբողայի կաշաղակները , «Պրոլետարներ միացէ՛ք» , կրակի պէս  
ճառերը , բռն՛րը՝ գործ չունեցող մուրացիկներու աւետարան : Դրուած  
է հիմը մարդուլթեան ազատազրութեան մեծագոյն գործին :

ԱՐՄԱՆ .— Նո՞ր շղթաներու համար :

ՄԱՐՏԻՆ .— Ուրիշ սեւէ մէկուն բերանէն սա նախատինքը պիտի գտնէր ան-  
միջական իր դարմանումը : Բայց քու միտքիդ հիմնական պարկեշտու-  
թեան վրայ իմ հաւատքը այնքան իրաւ , անտասան է , որ ամբաստա-  
նութիւնդ կը պիմաւորեմ հանդարտ : Կը իտեիս շղթաներէ , երբ աւելի  
քան ծանօթ են , զանդուածներուն իտի սեփականութեան երաճ՝ մեր  
ազատութիւնները :

ԱՐՄԱՆ .— Մէկ բան , Մարտին : Մտիկ պիտի ընեմ քեզ . հերիք է , որ խնա-  
րեա բեքլամը , աժան պոլիերգութիւնը , պիւցապներգութիւնը ձեր քա-  
րողչներուն :

ՄԱՐՏԻՆ .— Չունիմ աւելի որոտովին դբողում , քան լուսուտրել , ազատու-  
զրիւ միաքը մերիններէն , ինչպէս ձերիններէն : Սփիւռքոյ — միջազ-  
գային փրոփականաի աշխատանքով կատարուած փոտարանները չեմ  
զներ նժարի : Թէեւ արդար քու միաքը սրբաբաւոր է դբամատրական  
փրոփականան ալ կշուել իր հարապատ կերպարանքին , նպատակնե-  
րուն մէջ : Սփիւռքին բաժինը , իր կարգին , շատ սրբ է քեզի համար :  
Աս ալ կը պահեմ ազգային մեր նկարադրին սահմաններուն :

ԱՐՄԱՆ .— Այսի՞նքն :

**ՄԱՐՏԻՆ.** — Ձայն դնենք բովիկը մեր տկարութեանց : Աւելի՛ն . երկաքէն ալ : Մտիկ կ'ընես քու հին ընկերը : Ձեռ իջնելու մինչև մեր հերոսական աւանդութիւնը : Կր կատգէինք, երբ մեզ կը զբայինք հեղեղին մէջ խօսքին, ընչադուրհներու բարօրութիւնը պատգամող, մինչ շքեղ Փարիզին մէջ, պաւլարներէն դուրս կեանքը կրտանց էր, անուսպն անհուն զրկանք, նոյնիսկ երանուէա փրկիչներուն համար :

**ԱՐՄԱՆ.** — Աճապարէ :

**ՄԱՐՏԻՆ.** — Կու գոյ տալու ալ ժամանակը : Կը դայրանայիր, կը տատաղէիր խօսուածին եւ եղածին սա ահաւոր հակադրութենէն : Ատիկա մեր մշակութիւն ահաւոր կեղծիքն էր : Փոխուա՞՞ծ :

**ԱՐՄԱՆ.** — Կայ, Մարտին :

**ՄԱՐՏԻՆ.** — Այնքան քիչ, որ շնորժեր պրայիլ : Ըսին, թէ քու հաստատութիւնդ կը կատարարուէր աւելի արդար օրէնքներով : Կրնայ ըլլալ : Բայց խորհած եմ շուկաներուդ, հանքերուդ, նաւերուդ, հսկայական տաներուդ, ուր թերեւ ջանի մը բիւր մարդ կ'աշխատի :

**ԱՐՄԱՆ.** — Աւ իր սպրուտար կը հողայ :

**ՄԱՐՏԻՆ.** — Բայց սրուն աշխատանքին խեղձիւնը կու գայ ըլլալու սա կտաւին կտարը, սա հին պղինձը, սա զորդերը : Մի կարծեր, որ արեւտը կ'արհամարհեմ : Կ'արհամարհենք արեւտաւոյ ստեղծել ուղուած սնապաթիւնը : Այնպէս որ՝ մեր ասանդութեան պայմաններուն ու ներքի քու շուկաներուդ միջեւ ո՛չ մէկ տարբերութիւն :

**ԱՐՄԱՆ.** — Կ'ընդմիջեմ — մեր կարդերուն վերլուծումը կը նկատեմ աւելորդ ժամադրեմանութիւն : Ընդունէ, որ անոնց թերութիւնները ձեր ամենէն կատարի աեսարաններէն աւելի արժատապէս ի վիճակի ըլլամ վերլուծելու : Իմ ուզածը ձեր կարդերուն վերլուծումն է մէկու մը բերանով, որուն վրայ իմ շարդանքը, հրացումը շնն տժողունած :

**ՄԱՐՏԻՆ.** — Մի՛ տարածեր սա խօսակցութիւնը : Խորհէ, որ նաւարդագինը բիրաւոր հատորներ նուիրուած են հարցերու, սրոնց անունն իսկ կը յորդէր մեր ժամանակէն : Աւելիմ ներկայացնելիք ա) — մեր երկիրը . բ) — Խորհրդային հայրենիքը : Մի՛ վախճար, որ թերթերու մէջ քեզի մատուցուածը պիտի տաքցնեմ ու դնեմ տըջիդ : Մարտինը իր աչքը ունի ամէն հարցի համար :

**ԱՐՄԱՆ.** — Արտօծուած էք սեփական սկնոց դործածել :

**ՄԱՐՏԻՆ.** — Այո՛ նորութիւն : Ամէն մարդ ադատ է իր ակնոցը ունենալու, հերիք է, որ ակնոցին ներքեւ աչքը արժէք ունենայ : Մեր մէջ քննադատութիւնը սրբադան իրաւունք մըն է, պայմանաւ, որ այդ իրաւունքը չվերածուի բոնութեան : Կր կտուինք, կր վիճինք, մեր պարտոյց բոլոր ժամերը կը յատկացնենք ամէնէն հրատապ հարցերուն : Կը բաւէ միայն, որ հիմնականին մէջ չըլլանք խաւարամիտներ : Աւ հիմնականը խորհրդային իրաւակարգն է, այնքան իրաւ, ամբողջ, որքան են ձերինները, ձեզի համար : Խորհրդային Հայաստանը անճանաչելի բաւելու չափ փոխուած է :

**ՄԱՐՏԻՆ.** — Թերթ կը հտուի, Մարտին :

**ՄԱՐՏԻՆ.** — Մի՛ աճապարիք : Ինչ որ գրուած է մեր հայրենիքին վերելքին համար, այսօր իմ աչքերուս կը թուի անցեալ :

**ԱՐՄԱՆ.** — Այրքան շուտ կը մտչին մարդերը եւ գաղափարները :

**ՄԱՐՏԻՆ.** — Հիմնուր մաշիլ չի նշանակեր : Կը նշանակէ անբաւականութիւն : Մեր երկիրը ունի փոքանսիկ հսկայ կարեկիտութիւններ :



ԱՐՄԱՆ.— Ո՞ր երկիրը չունի առիկա :

ՄԱՐՏԻՆ.— Մե՛րը մասնաւորաբար : Մեր լեռները հրտաներ են , որոնց մէկ սրչն իսկ դեռ չենք արձակած : Աւ դանձը , որ անոնց ներսը կը քնանայ : Պիտի քակեմ լեռներուն հանդոյցը :

ԱՐՄԱՆ.— Հանճը չեա սակցծելու :

ՄԱՐՏԻՆ.— Պիտի պեղեմ լեռներուն արդանայները :

ԱՐՄԱՆ.— Տարօրինակ ես , Մարտին , ոգւայնական կուսակցապետ մը տարբեր լեզու պիտի չզործածէր :

ՄԱՐՏԻՆ.— Ո՛չ աստօրինակ , ոչ ալ սովորական : Իմ ժողովուրդն է առիկա , մեր հայրենիքին մէջ ինքզինքը եւ համամարդկայինը հաւասար կատարելութեամբ : Քու աղաւթ , կը կրկնեմ , պիտի տառապի քու գաւառիչը ըլլալու մեղքէն : Ահա՛ տարբերութիւնը : Մեր բոլոր աղաքը Խորհրդային հայրենիքին հղարտութեանը քով կը գտնեն հպարտութիւնը հայ հայրենիքին : Ասիկա երկուութիւնը չէ : Ասիկա հարազատ մարդկութիւնն է : Դարերով սարգիւր ենք մեզ պերի գործածող ժողովուրդներուն լեզուն : Հիմա մեզմէ ուղուա՛ծը՝ մեր լեզուն : Աւ կը հարցնեմ որո՞ւ՛ ջու նաւատորմը , ջու հրերդ , նաւթուղիները , պալատները , պետական թանգարաններու հետ մրցող ջու անձնական թանգարաններդ : Այդ ամէ՛նը՝ որոնց համար խուլ , մութ հղարտութիւնը հազիւ կը յաջողիւ ծածկել կետարացիական լրջութեանդ տակ : Աւ ասոնց վերայ կուսակածներ , ասոնց քեզի , ասնուպն դակիր համար հետախաղաղ կորուստը պատմել չի նշանակեր երազներու վրայ նաւարկել : Արման , իմ սիրելի , իմ բարեկամ , իմ թանկապին : Պահի մը համար եզիր տղայ , այսինքն՝ որտի հղարտակ ու քու բոլոր նիւթեղէն կարտութիւնը փոխադրէ քու հայրենիքդ , որպէսպի հոն պտղաբերի , ճիւղ , ծաղկի : Երա՞զ : Բայց դուն իրաւ մարդ մըն ես : Խորհէ , որ երազները երբեմն աւելի իրական ըսին մեր աշխարհին բաներէն : Փոխադրէ մա՛ն նաւանդ ինքզինքդ , այս անգամ առանց տղայ ըլլալու , այլ ճիշդ քու բնկերթդ պէս , որ իր գիտութիւնը , ուժերը , կիրքերը , հաւատքը ասոնց ասարակոյսի տարաւ այդ հայրենիքին , երբ այնքան համաշխարհիկ կազմակերպութիւններ դարպասը կ'ընէին անոր կարողութիւններուն : Մինակ հօրը ձեռնարկներուն մէջ եւ քեզի հետ պիտի յաջողին կեանքէն սպասելի իմ ամբողջը պատկազարդ ունենայու :

ԱՐՄԱՆ.— Կր խօսի՞ս ինձի շահէդ , քեզ միտոյն մտիկ ըրած ըլլալու :

ՄԱՐՏԻՆ.— Ծահէ՞ս : Բայց պիտի չեն բաւեր այդ շահը քեզի պատմելու :

ԱՐՄԱՆ.— Գիրք դրելու չէիր եկած : Քանի մը սող , քու յեղուսով՝ քանի մը գիծ : Արմանը նոյն ուսումները ըրած է քեզի հետ :

ՄԱՐՏԻՆ.— Պիտի ասնիմ քեզ , ու պիտի սեւնես : Հաղաբներ երջանկապուցներ եմ :

ԱՐՄԱՆ. — Տասնեակ հազարներով տաւներ կ'աղբին իմ դործիս մէջ:

ՄԱՐՏԻՆ. — Որոնք քեզ կը նախանձին, քեզ կ'ատեն, մտքով կ'անիծեն: Իմ մարդերը կ'աշխատին իրենց համար: Կեանքը ես վերածեր եմ ներգաշնակ խաղաղութեան մը: Իմ ամէնէն խոնարհ բանասորը կը հաղնի ինձի պէս:

ԱՐՄԱՆ. — Կը լսե՞ս նոր պիւրոկրատիսն ու իր անհուն շուտասութիւնները, որոնք միջազգային մամուլին մէջ այնքան աղմուկ կը ստեղծեն:

ՄԱՐՏԻՆ. — Միջազգային մամուլը իր անունը կ'արդարացնէ այդ յարձակումներով: Ի վերջոյ մեր գէմն են աշխարհին հինգ վեցերորդը ու ամբողջ սփին:

ԱՐՄԱՆ. — Սո՞ւտ են պատմուածները:

ՄԱՐՏԻՆ. — Քեզի խօսողը քու ընկերն է: Ու քու ընկերը կը հազնի իր դրոնաստին հազար: Ահա՛ իրականութիւնը: Հիմա մեր կարգին տնտեսականը չունիմ քեզի վերլուծելիք: Շուտասութիւնը փնտէ՛ ձեր կարգերուն մէջ: «Ու փառք յաւիտեանս ամէն» կ'ըսէր Փարիզի եղբակորորս, երբ չուզէր շարունակել: Կը ձգեմ այդ երակը: Ու կը դառնամ իմ ժողովուրդին, որ իր հովիտներու, պագերկաներու, արհեստանոցի հոգեբանութենէն անցած է ճարտարարտեսական վրանի:

ԱՐՄԱՆ. — Շո՞հը:

ՄԱՐՏԻՆ. — Ի վերջոյ մարդերը երկրի վրայ հովուերգութիւն պիտի չըրեն, ոչ ալ տառ-փախաւութեան ախտեաններ պիտի դառնան: Եկեր են, իրենց սաքի հողը փոխելու, անիչ առնելու համար, աւելի դիւրու, աւելի աւատ, ինչ որ կրնայ տալ: Կը լսեմ այս դեմոնին այ վրայ, հասարակ տեղիքին վախէն՝ քու եւ իմ հաշուոյ հաւատարապէս: Քու ժողովուրդը, որ հիմնովին նոր է՝ թէ՛ իբր մարմին, թէ՛ իբր միտք ու հոգի, մեր հայրենիքին մէջ: Արման, ես տէրտէր մը չեմ, ո՛չ ալ Մոսկէս մարդարէ մը: Բայց հպարտ եմ բսելու, որ մեր բարքերուն մէջ պարզութիւնն ու սէրը դարձացնելու աստիճան զօրաւոր արմատ են ձգած: Քու ժողովուրդը, արի, արդար, հեղինակ՝ իր նոր ճակատադրին: Ու կը հրաւիրեմ քեզ, որ հաւատաս:

ԱՐՄԱՆ. — Տարածայնութիւններո՞ւն:

ՄԱՐՏԻՆ. — Անոնք ալ պիտի ստնեմ նկատի: Բայց դուն կը ճանչնաս ու Սփիւռքը, ուր ամէն դիւրև մարդարհութիւն մըն է: Այդ տարածարնութիւնները չեն հերքուիր ուրիշ տարածայնութիւններով: Կու դաս ու կը տեսնես: Ներդաղթողները չէին կրնար ընդունիլ իրենց տեսածները: Պիտի տանիմ քեզ ո՛ւր որ մեր աշխատանքը հասած է: Այս ամէնը այնքան կարճ տեւադութեան մը վրայ: Ու վայրկեան մը կ'ըլլամ ես ինձի անձնատուր: Մեր լեռները՝ դարձած ամէնէն նկարչապետ ամարանոցները խորհրդային հայրենիքին: Մեր լիճերու փոռնքին պիտի աճին մեր մշակոյթին բոլոր գեղեցկութիւնները: Ու մեր դաշտերուն վրայ՝ արիւնին աստղանակները, մեր դատակները պիտի աղբին այնքան խիտ, այնքան խոր, այնքան իրաւ, որ դարաւոր ողբերգութիւնը չքանայ արեան չորութիւններէն:

ԱՐՄԱՆ. — Ազուոր երազ: Բայց այս ամէնը՝ ինչո՞վ:

ՄԱՐՏԻՆ. — Սփիւռքին ոչ դրամովը անշուշտ: Պորհրդային հայրենիքը երկու պատերազմներէ վերջ իր աւերմունքը դարձանելու մէջ ոչ մէկ երկրէ կը մնայ վայր: Բայց կ'ըսեմ քեզի. քու շքեղ կարողութիւնը կը դղա՞ս, թէ՛ որքան արագ ու շքեղ Հայաստան մը կը խոստանայ: Տարբ

տարին բա՛ւ, սրբկոզի Արման Աշտար հարստութիւնը մեր երկրին մէջ վերածուել տմենանոր կերպարանքներու: Նորանորոգ դրութիւնները հանրերու շահագործման: Հանրային հաստատութիւնները: Հսկայա-կան ամարանոցները: Բայց այս բաներուն թւումը ընելու չեմ եկած ես հոս: Եկած եմ զուրիտից համար:

**ԱՐԲԱՆ.** — Լրջութիւն, Մարտին:

**ՄԱՐՏԻՆ.** — Աւելի քան: Կը հաւատամ, որ քով քովի, զլուսի զլուսի մենք պիտի իրողորձենք այս ամէնը առանց զու տնտեսականիդ: Տուր հօրդ իր դահլուծը, իր դորձը շարունակելու: Ձի փոխուելը անիկա, փտա՛հ եմ տար: Բայց Արմանը յատկում մըն է ահա մեր հայրենիքին: Ու քիչ մը թօթուէ ինքզինքդ: Գիտեմ, որ դրամը հեշտանք մը չէ քեզի: Գրամէն անգին կայ ստեղծումը: Ու հոս է, որ ունիս իմանալու: Խորհրդային կարգերուն մէջ ամէնէն նպատատուօրեալ աշխատաւորներն են ստեղծարարձ միտքերը:

Էջ 103 - 105

**ԱՇՈՏ.** — Ոչ ալ ա՛յլ լարբ: Չայրացուցիչ բան է այս ժողովուրդին ճարել-ճարճարել, առասպելին դանձառունէն այնպիսի յատկութիւններ, որ բնք ոչ մէկ դարու գործեր են մեր մէջ, քանի որ այլ փոռարանուած յատկութիւնները չէին կրնար հակառակը սղջունող ունենալ: Տառա-կէն խաղող չ'եղեր, կ'ըսէին մեր երկիրը: Այլ յատկութիւններուն հա-մար էր թերեւ, որ վճարեցինք մեր ժողովուրդին կէսը իբրեւ զին: Ու սակաւին պարտական ենք: Մարհակին միւս կէսը երաշխաւորուած է Սփիւռքով:

**ՄԱՐՏԻՆ.** — Վճռած ենք պատուել բոլոր մուրհակները, պիտի ազատենք Սփիւռքը:

**ԱՇՈՏ.** — Հայաստանն ամենելով:

**ՄԱՐՏԻՆ.** — Պիտի չխօսէինք սեփմներու մասին: Մենք կը հաւատանք, որ Հայաստանն ամենելով մեր ժողովուրդը՝ դա՛յն կ'ազատենք սննչացումէն: Իսկ եթէ դուք ունիք ուրիշ տեղ մը, ինչո՞ւ չէ: Ատկէ առաջ, հիմնա-կանին մէջ չէք կրնար մեզի հետ չըլլալ:

**ԱՇՈՏ.** — Այլ հիմնակա՞նք:

**ՄԱՐՏԻՆ.** — Թէ Հայաստանէն դուրս մեր ժողովուրդին ճակատադիրը հեռա-խաղաղ ձուլուին է օտարին մէջ:

**ԱՇՈՏ.** — Ձէ ձուլուած հրեան:

**ՄԱՐՏԻՆ.** — Պատմութիւնը հողիւ թէ կը սխալի: Ձէ ձուլուած հրեան, որով-հետեւ ոչ մէկ ժողովուրդ ազնեց զինք՝ ըման երկա հազար տարի: Այդ դարչանքը պաշտպանեց զինք: Ու հիմա, որ փոխուած է դարչանքը, յիտուն տարի վերջ դուք չէք գտներ այդ հրեան, Պաղեստինէն դուրս: Ու մտածման նոյն ճամբով չէք գտներ հայ, նոյն ժամանակին վրայ, Հայաստանէն դուրս:

**ԱՇՈՏ** — Այդ լարն ալ չիմ ուղեր, որ զարնես: Ապաղան լու է յանձնել Աստուծոյ: Գիտունը՝ ներկայով:

**ՄԱՐՏԻՆ** — Բայց դուք սկզբունքով կը մերժէք Խորհրդային Միութեան մէջ որեւէ գործունէութիւն: Ու դժուար է հաշտուիլ մասածիրու այդ ձեւին:

**ԱՇՈՏ** — Աւելորդ է խօսիլ: Իմ ձեռնարկներս ինքնին այնքան բնականաբար, ինծի չեն ձգեր ո՛չ ժամանակ, ոչ ալ կարելութիւն ինծի հիմնովին անձանօթ մարդերու վրայ արկածախնդրել: Ինչ որ յաւեր, ինծի չի հասնիր: Մի կարծեր, որ Արմանը համարելու կը նմանի Աշտար համոզելը:

**ՄԱՐՏԻՆ** — Արմանը չէ համարուած:

**ԱՇՈՏ** — Ես դիտեմ ամէն բան: Տղաս խօսած է ինծի: Ու կը ճանչնամ իմ աղաս: Անիկա ես չի կրնար գասնալ իր մտազբույթեանէն:

**ՄԱՐՏԻՆ** — Աստ՞ոց ձեզի:

**ԱՇՈՏ** — Անշուշտ քիչ մը դժուար է նման կարեկցութիւն մը գիմատուրել, այնքան իրարմով ենք եղած: Ու այնքան իմ աղան զիս կ'երկարածուի: Բայց քու հոս զարէզ ասզին՝ իմ վարձը կը պղծ մտանդուած:

**ՄԱՐՏԻՆ** — Բայց իր աստղինութիւնը հայրենի աստղինութիւնները միայն կը խորհրդանշէ:

**ԱՇՈՏ** — Իմ դրամը տարով չի հասնիր, աղաս, կը հասնի չսիրուելով: Կը հասնի չինամուելով: Կը հասնի մտ'նաւանդ արկածախնդրութեանց մէջ վտանգուելով:

**ՄԱՐՏԻՆ** — Աքանջելի՛: Արման Աշտար քեզի շտի հազած է կիրքը ձեզ գործին:

**ԱՇՈՏ** — Բայց ահա բացուած է իմ դռներէն զէպի ուրիշ գօտիներ: Խօսեցու ինծի բաց ծովերէն:

**ՄԱՐՏԻՆ** — Բաց ծովե՞րը:

**ԱՇՈՏ** — Անձանօթը: Ձեր հոգեկրօնը անձանօթը:

**ՄԱՐՏԻՆ** — Խորհրդային Միութի՞ւնը:

**ԱՇՈՏ** — Որ բոլոր մութ, անյայտ բաներու հմայքը, հրապոյրը ունի քեզի պէս անսիրձ հողիներուն վրայ:

**ՄԱՐՏԻՆ** — Ինչպէ՛ս կը շտայէք այդ անսիրձութիւնը գոնէ ձեր զաւկին, որ ձեր բոլոր ձեռնարկները սրշտարանած է՝ ձեզի շտի ձեռնհաս գարս գալով: Ու շտհած՝ երբեմն, ձեզի պէմ ալ գործելով, երբ դնեց նիս Եորքի նոր հաստատուելիք արուարձանին մեհաշնորհը: Յետոյ, այդ հրապոյրին մէջ ունի՞ն բաժին անլոօ-սաքսոնները, որոնք այնքան նրպատուոր պայմաններով կը գառնան մեր շտրքը: Ձեր տունը ինչո՞ւ վախնար...

**ԱՇՈՏ** — Կարճ կը տեսնես: Անլոօ-սաքսոն տուները իրենց կոնակը սենին պետութեանց նաւատարմերը, աթոճիք պամպերը այսօր: Մասած է երէկին, մօտիկ անցեալին: Ի՞նչ դիւրութեամբ, ի՞նչ բնական գործողութեան մը նման ձեր կոտորվարութիւնը կուլ տուաւ Փրանսացիներէն փոխառեալ միլիոնները: Բասն միլիոն իմ սրահանջը այդ գործէն կը մնայ բաց: Ուղիղ աւագակութիւն:

**ՄԱՐՏԻՆ** — Ուղիղ այդ աւագակութիւնը անշուշտ գործուած այս անգամ Փրանսացիներուն կողմէ, որոնք նայնքան բնականութեամբ կուլ տուին ամերիկեան միլիոնները: Գերմաններուն: Ու քիչ մը բոլոր կոտորվարութիւններուն, որոնք սկիի տեղ թուղթ կը ծախեն իրենց ժո-

զտխուրդներուն : Աւագակոթիւնը ուրեմն մենաչնորճ մը չէ Խորհրդա-  
յին Միւսթեան :

ԱՇՈՏ .— Պիտի չփիճարանինք : Որքան ասին , որ սղջ եմ , իմ ատնը չի մաս-  
նակցիր սրեւէ շահազործական ձեռնարկի , աշխարհի մէկ վեցերոր-  
դին մէջ :

ՄԱՐՏԻՆ .— Երանդ մը , պարսն Աշտ : Նոյնիսկ այն պարագային , որ դարձի  
ձեր պատարանքը , բնագլը ձեզ թելադրէր արդեւք՝ մասնակցելու սրեւէ  
ձեռնարկի շքեզ շահաստանին մէջ , որ մէկ վեցերորդն է աշխարհին ,  
սակաւին հը մնայ բոց ուրիշ երես մը : Եւ ասին է , որ մտածէք ատոր :  
Խորունկ հաճոյք է ինձի հաստատել , որ Արմենակ Աշտուր հը մնայ  
հաստարիմ իր արեան ձայներուն :

ԱՇՈՏ .— Ձեզի չե՞ն ըսած , որ արդիւրեւած է ինձի հետ խօսիլ սղգային հար-  
ցերու շուրջ :

ՄԱՐՏԻՆ .— Բայց ես իմբողեր մը կամ ճառախօս մը չեմ , ենթակայ մնա-  
լու համար այդ արդեւքին : Ես ճարտարագէտ մըն եմ , մեծ շինող մը :  
Ու եկեր եմ իմ երկրին համար : Ձեմ ըսեր , թէ պարտքեր կրնաք սւնե-  
նալ ձեր հայրենիքին : Բայց կարծեմ , թէ պարտքեր սւնիք ձեզի ու ձեր  
զաւկին դէմ :

ԱՇՈՏ .— Դո՞ւն պիտի բլլայիր ինձի ատնք յիշեցնողը :

ՄԱՐՏԻՆ .— Ըսել կ'ուզէք , թէ մտածե՞ր էք ձեր հարստութեան սպասող  
վարձանին :

ԱՇՈՏ .— Հին պատմութիւն , Մարտին :

ՄԱՐՏԻՆ .— Ես Հնդկաստանը , Լեհաստանը չանցուցի մտքէս : Ունիմ նկատի  
արեւմտեան նոր օրէնքները , որոնք մեծ հաստատութիւններուն հի-  
մունքն իսկ հը կտրտեն :

ՅԱԿՈՅ ԹՇԱԿԱՆ

(Շար . 2 եւ վերջ)

Յ. Մ Ա Ն Ո Ի Կ Ե Ա Ն

**ՅԵՏ — ՄԻՋՕՐԷԻ ՄՏՈՐՈՒՄ՝**

**ՀՈՄԵՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ**

Ըսիր, որ սիրեմ քեզ

Մագքադիմէի մը հեգուքեամբը ազու,

Սրբապատկերի մը բարութեամբը վնխո:

Ըսիր, որ ըմբռնեմ քեզ

աներետոյք իրերու յայտնութեան մէջ:

Աներետոյք գեղեցկութեան մը իմացումն էիր դուն:

Էութեանս ջերմաստիճանը պայմանաւորող

տարրը յուզական,

որ չբացուեցաւ միջօրէիս համբոյրին:

Թափառեցայ երգի մը պէս,

որ քեզ փնտռեմ:

Ուղիները ծովափնայ ըսին,

թէ հարսնացած ես դուն:

Ոչ մէկ հարսնարան չյայտնարերեց դաշնութիւնը

վարդաշղարշ գիշերներուդ հովուերգութեան:

Ըսին՝

թէ ստուերացած ես դուն:

Անցայ ստուերներու ներաշխարհով.

ստուերները ծիծաղեցան ու փախան՝

զիս մատնելով մամուսմուսյլ ջրափներուդ:

Հա՞րկ էր, որ նանչնայիմք զիրար

մախրացած երագներէ հտք,

երբ անցած եմ արդէն

հոգեհանջ վիճակներուս գուգահեռականէն՝

ջրատոյզ յիշատակներով մակընթացուած...:

Հա՞րկ էր, որ ըմբռնէի քեզ

մեռած վարդերու բուրմունքին մէջ,

դողանջներու յամբացած աղապատանքին

եւ լերդացած արեան կաթիլներու մէջ,

որոնք կը բերեն վկայութիւնը

ընկրկումներու յաճախանքին:

Ո՞ւր է երգը,

որ պիտի բարձրանար մեր իդներուն ածուներէն՝

մրգահասի մը լիութեամբ:

Երգը՝ գար կրեցինք դարեր  
Գաղափարի,

Արիւնի,

Հողի

համագոյակից միասնութեամբ :

Երգը՝ որ պիտի աւետէր հրճուանքը

ծովամոյն սպասումներու՝

երազիւ հմայեովը բարեխառնուած :

Հա՞րկ էր սիրելի քեզ

մեղեդիացած պատրանքի մը պէս :

Զգալ,

որ բազմավանկ կշռոյթն էս պատրանքներու :

Պատրանքներ՝

որ ունին լեզուակը կապոյտ բոցավառութեան

եւ շնչաւորումը՝

խոստումներու գորովանքին :

Ո՞վ նակատագրեց,

որ դառնամ անգիտակից յուզարկուորը

կեանքիդ իմացումներուն եռեակ

եւ տարանցեմ քեզ հանգանակէ հանգանակ՝

անձանօք աստուածներու երկրպագութեամբ :

Օրօ՞ր ծփանքներուդ,

որոնք ժամանակի խաժամուժին

կոբսնցուցին կողմնացոյցը գիտակցութեանդ .

ձուլուելով՝

անէակից ձայներու տօներգութեանց :

Օրօ՞ր նամբաներուդ,

որոնք հանգրիհուեցան

սրբացած երգերու խաչներուկներուն :

Օրօ՞ր պահերուդ,

որոնք հանդիսացան

անեզրափակ հարվոյթքը՝

վարձութեան մը դարանակալ :

Լուս էս հիւսն՝

անայցելու Տանարին պէս Եփեսոսի,

ուր ամէն անդրադարձում կը կրէ ծնունդը

ձայնիդ հոգեմատոյց քնարերգութեան :

Կը գգամ,

քէ կը ծնիս դուն կրկին

անցելատոյգ գօտիներէդ մագնիսակամ :

Կ'ըլլաս՝

հեշտականչ հրաւեր,

վերայայտ ապրում :

Ափո՛ւ ափիս մէջ

կը վերապահեմ ջերմութիւնը մռայաւմներու :

Ափո՛ւ ափիս մէջ

կը վերագտնեմ հունը

տիեզերական կապակցութեան :

Կը գծագրեմ ափիդ վրայ ,

նման տերեւի մը պապիրոսեան ,

նախադարը

զլացուած երջանկութեան ,

նախանուագը

մենած արշարոյսներուդ համանուագին . . . :

## Վ Ե Ր Ա Ն Ո Ր Ո Գ Ճ Ա Ն Ա Ջ Ո Ղ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ

Քարացած գիշերներ կան այստեղ ,

Քարացած վայրկեաններ ,

ուր կը մնջէ տառապանքը .

գոնտուած հարցականներու :

Քաղցր է ըմբռնելի քեզ

Որմաքարերուդ հեաքոյր մտերմութեան մէջ ,

Որտե՛ք քարացած արձագանցներն են

վեհանիստ իմացումներուդ ,

խոհերուդ վերնական իմաստութեան :

Կը գգամ , քէ մեր միջեւ

կայ ապրում մը գաղտնատեսիլ ,

անճակտելի՛ ինչպէս նարօտ ,

հագեցարար՝ ինչպէս լուսփունջ խոհական :

Կը սիրեմ լուսփունջ ,

որ գգացական երակն է

վիմակներուս ներանձնական ,

Քացման հոլովը՝

խոհերուս բազմանոյով երանգներուն :

Պաղատանքն եմ ցաւի մը անապաշտ ,

գոր անգիտութեամբ կրած եմ կարծես

դարեր քեզի հետ՝

հոգիս ուժացնոյ հրատանջութեամբ :

Թափառական արձագանգն եմ

Ձայնիդ յորդորական ,

որ հաւատքիս քեւարախ անգորութեան մէջ՝

դարձած եմ քեզի

ախրութեան մը պէս անձառօք :



Ածանցուած մակդիրն եմ  
 անածանցեալ զգացողութեանդ,  
 Ածանցուած երանգը՝  
 ներստայգ մտարումներսդ :

Ո՞ւր պիտի յանգի  
 Մշտանով երբք անհեթեք քափառումներսս,  
 Կերպարանավոյտսմբ օրերսս գիտակցութեան,  
 Տարակոյսէ տարակոյս շրջագարնը  
 Խոհերսս ածանցումներսն :

Անածանցեալ Ֆաղցրութիւն  
 Ածանցէ՛ զիս  
 Ըստ վերափոխման խորհուրդիդ,  
 Եւ կերպարէ՛ հնարատրութիւնը Յոյսին՝  
 Վերագանելու նրբերանգներն այն երգին,  
 Զոր դեռ ոչ մէկ զգայարտնի  
 Զյանկերգեց որոնումիս գօտիներուն այրեցեալ... :

Աչքերուդ մեղբայրոյս հմայքին  
 Կը բանամ առգաւտն իզճերսս... :

Ողջո՞յն,  
 երկնատաններուդ լոյսին բացուած  
 Տեսլականիդ  
 որուն ծիրանեփեան ժղխտով ես կը ճուլուխմ  
 Հեռտայգ կարօտներսս յիշողութեան :

Ողջո՞յն,  
 զնստուած պահերուդ,  
 որոնք վերացման հալոյոյթն են  
 ներաշխարհն իմ բարեխտնող զգայնութեան :

Զգալ, թէ ոչքերդ ունին խորութիւնը  
 անպարագրելի տարածութեանց,  
 ուր անծանօթ ամէն սխրութիւն  
 կ'ածանցուի  
 զնստուած բառերուդ առնչութեամբ :

Զգալ, թէ չափանիշն ես հաւատքիս  
 եւ դրամագլուխը՝  
 ցանկացուած երգերսս հարտութեան :

Ֆաղցր է քոզգերծուի  
 Հարցականիդ խորհրդատան դիմաց՝  
 Հարցաֆննուած բառի մը պէս :  
 Բացուի անածանցեալ լոյսիդ՝  
 Վերանորոգ նանաչողութեամբ :

Ն. Վ Ի Բ Ա Պ Ե Ա Ն

Ա Յ Ս Ի Ն Չ Ի Ն Փ Ե Ս Ա Ն...

«Նոյն քաղի մարդիկ» անուն իր անգլանիկ հասարկն ետք, ներսն Վերսալեան հաստատութեն շարունակեց ծառայել իր կոչումին, հակառակ անար, որ ասեալ ժամանակամիջոցին տարեցաւ. գրական միտաբարակ բոլորովն հետս միջնադարի մը մէջ, ամերիկեան երկինքին տակ, ամերիկացի, մեքսիքացի ու փորթուրիքացի դարձարանային լանուօրներու հետ:

Այս եւ յաջորդ պատմածքը մաս կը կողմէն Վերսալեանի երկրորդ հասարկն, որ կը կոչուի «Երկրորդ արար» եւ լսյս կը տեսնէ յատաջիկայ գործնան:

— Ի՛հ, Մտտա տուտու, մահուանդ լարը ինչե՛ր յիշեցուց ինձի. ի՛նչ էինք, ս՛ւր էինք, ս՛ւր հասանք: Քու միջնորդութեանդ շնորհիւ ծանօթացայ մարդոց, ամուսնացայ եւ եղայ քու համայնքիդ մէջ հանրածանօթ այսինչ ազային փեսան: Աստուած հոգիդ լուսաւորէ, Մտտա տուտու:



Առաջ դիտ սեւէ մէկը չէր ճանչնար: Պարզ դարձաւոր մըն էի ու մօրս հետ կ'ապրէի դիզի տանս մէջ: Երբ ամուսնութեան տարիքը հասայ, մայրս սկսաւ աչքը չորս կողմ պարապնել:

Կիւրիոսար ազջիկ մը ունէր. յարմար է բռնով՝ անոր ձեռքը խնդրեցինք: Ասանց այլևայլի մեքժեցին:

Յետոյ՝ մայրս ուրիշ քանի մը աղջիկներու ալ ձեռքը խնդրեց: Անոնք ալ ուրիշ կերպ արտասրայուեցան: Այրատութիւնս, փարպեա արհեստաւոր մը

չրլլարս կարծեմ մեծ դեր խաղացին մեր ձախողութեան մէջ:

Գիւզը սկսաւ նեղ գալ մօրս եւ, օր մըն ալ, որոշեցինք փոխադրուիլ Պէյբութ, որ սկսայ իբր աշկերտ աշխատիլ կառատան մը մէջ: Ետքը, պղտիկ կարած մը բացի, դարձաւոր մըն ալ բերի ու սկսայ աշխատցնել քովս: Պղտիկ կարած մըն էր, բայց մեծ դեր խաղաց ամուսնանալու տեսակէտէն:

Մօրս կ'ըսէի.

— Տես, հիմա տես. ուղած աղջիկդ ստքդ կու դայ:

Ու եկաւ, ան ալ ի՛նչ աղջիկ, հարուստ ու եկեղեցիին մէջ հանրածանօթ այսինչ ազային աղջիկը:



Ամուսնական հարցերու լուսապէս ծանօթ, փորձառու, եփուէն Մտտա տուտուին մայրս հարցուցած էր, թէ սանկ յարմար աղջիկ մը կա՞յ տղուն համար:

— Անշուշտ կայ, լեցածն, սպառնալից չափ, — սրտասխալանած էր ան ու առաջին տոնթոյ իսկ ցոյց առած էր աշխնչ ազգային այլնիկը:

Երբ ազջիկանի համար ճամբայ ելած էինք, ըսաւ.

— Հայրը հարուստ է ու մէկ ոտքը գերեզմանը:

Հարուստ ու սաքին մէկուն գերեզման բլրալը ակամօքիս անուշ հնչեց: Առ ըսաւ է, ըսի մտքէս, երբ սանդուխէն վեր կը բարձրանայինք:

Մեզ գլխաւորեցին հայրը, մայրը եւ այլնիկը: Մարդը իրապէս ծեր էր: Սիրտս խոյտայ: Անբաւարար եկամուստիս հագել օրը օրին կ'աղբէինք մօրս հետ: Ինչպէ՞ս կ'ընայի այդ պարմաններուն մէջ կ'ըն պահել:

(Բայց, իմ չոր բախտէս, մարդուն միւս ոտքին մինչեւ գերեզման իջնելը քսան տարի առաւ):

Մտկոյն, անշուշտ, կարեւորը ազջիկն էր:

Երբ դուրս ելանք, մայրս ըսաւ.

— Խաթունի պէս ազջիկ կ'երեւայ:

Երկու օր ետք, ձեռքը խնդրեցինք: Իրենք ալ աջին-ձախին շնայեցան: Հերիք է, որ կարած ունէի եւ հաստիով ու մարմնով ներկայանայի երիտասարդ մըն էի:

Օր մը, երբ աւելի հեռաքրքրուեցան գործիս միճակով, հակառակ արհեստէն քիչ բան հասկնալուս՝ ըսի, որ մեծ վարպետ մըն եմ ու միտք ունիմ ընդարձակելու կարածս: Ապա՝ պարզեցի իրենց ինքնաշարժներու աշխարհին մէջ յեղափոխութիւն մտցնելու ծրագրիս, միայն թէ՛ աւելցուցի, փոքր զբամազլուխի մը պէտք ունիմ յաջողութեան համար:

Աներհայրս, հողին լոյսերու մէջ պրակի, հայթայթեց պէտք եղած դրամը եւ ես թերթերուն մէջ յայտարարել տրուի:

— «Յեզպախաթիւն ինքնաշարժներու աշխարհին մէջ»:

Բայց հակառակ անոր, որ աներհօրս պատկանած եկեղեցիին անգամները ինծի կը բերէին իրենց ինքնաշարժները, յաջողութիւն չունեցայ, ոչ ոք կըրցայ պահել:

ձգել: Դժգոհելով՝ ես կը բերէին նորագած ինքնաշարժներս ու ես նորէն կը մանէի անոնց տակ, աս կ'ընէի, ան կ'ընէի ու միշտ արդարացած դուրս կուգայի: Ո՞վ չէր դանդաղեցրէր այս կեանքին մէջ: Երէկ ստամոնարոյժի գացի, բայց գեւ մինչեւ հիմա ակոսս կը ցաւի: Քանի՞-քանի՞ բժիշկներ սխալ դեղերով մարդիկ անպի աշխարհը կը դրկեն: Ինքնաշարժ նորոգողներն ալ ազդպէս են: Բան մը կ'ընեն եւ ուրիշ բան դուրս կու գայ:

Իրականութեան մէջ, ես արհեստէն բան չէի հասկնար: Մեծցած էի գիւղին մէջ եւ որեւէ բանի մասին լրիւ գաղափար չունէի: Ետքն ալ, երբ քաղաք դացինք ու ամուսնացայ, մէկ անգամէն հանրամասնութիւն գործայ՝ իրրեւ աշխնչ ազգային փեռան:

Երբ իմ մասին խօսէին, այդ հանդամանքով կը պատկերացնէին դիս.

— Աշխնչ ազգային փեռան:

Այդ պատճառով, աշուհեակե պատիւի եւ գիւրքի արժանացայ հասարակութեան մէջ: Շարաթը չորս-հինգ օր ժողովի կ'երթայի: Ինծի պէս զբաղած մարդ չէր գտնուեր:

Ես, աշխնչ ազգային փեռան, անդամ մը չընարուեցայ բռնով՝ ընդգլխաւորներուն միացայ ու պատուելին ոտքս եկաւ եւ ազաչեց, որ փոխեմ ընթացքս: Ես, մասս օղին մէջ շարժելով՝ իրեն հասկցուցի, որ ես աշխնչ ազգային փեռան եմ եւ ինք պարտաւոր է գիտ ամէն տարի ժողովական ընտրել տալ: Պատուելին խոստացաւ ու յաջորդ տարի գիտ հոգարարձու նշանակեցին, ետքը՝ ինամակայ, ապա՝ խորհրդականի անդամ ու ամենամեթն ալ՝ գերեզմանատան յանձնարարութիւն անդամ:

Ժողովականներու չդոյութեան պատճառով՝ երբեմն կը պատահէր, որ քանի մը ժողովներու անդամ ըլլամ: Հազիւ գործէն եկած՝ հեւ ի հեւ ժողովի կը փութայի: Անդամ մըն ալ ասս վայրկեանի չափ ուշացած էի.

— Ո՞ւր մնացիր, եղբայր, — ըսին, — տոանց քեզի ժողով չենք կրնար դու մարել:

Յետոյ, որպէսզի ոտքս աւելի ամ-

բողոքնս՝ այլ ժողովներուն մէջ, սկսայ ինքրինքս ապաշխարած մարդու պէս ցոյց տալ: Արդէն մականունս ալ կը նըպատէր այլ կեցուածքիս, — Փափուկեան: Ինծի Փափուկեան եզրայր ալ կ'ընէին: Այնպէս կը խորհէին, որ ես իրապէս փափուկ եմ, բացի քոնի մը ուսեալ երիտասարդներէ, սրտնք, սուկայն, հակասակ իրենց ուսումին, օր մը իսկ ժողովի անգամ չլրցան ըլլալ: Ո՞վ կ'ընդունէր այդքան զիտակեց մարդիկ, սրտնք միայն ըննադատե՞լ զիտան: Մենք այդպէս չէինք վարուէր եւ ժողովի անգամ կ'ընարուէինք եւ ոչ թէ անոնց պէս միշտ զուրս կը մնայինք:

Ես արդէն խօսելու ու կարծիք յայտնելու կարողութիւն չունէի: Ժողովականները լուռ մտիկ բնիկ ետք տուն կու գայի՝ իմաստունի հոյեր առած: Կինս ալ ինձմով կը հարարանար, որ ժողովական եմ:

Երբ հիւրութեան երթայինք, աներհօրս հետ շատ կը խօսէի ու լեզուս շէք կենար: Մարդիկ կը կարծէին, թէ ժողովներու մէջ ալ այդպէս եմ, մինչդեռ հոն ասո՞ր կը նայէի, միւսի՞ն մտիկ կ'ընէի ու մէյ մըն ալ՝ հարո՞ք ոտքի, ժողովը վերջացած յայտարարելով՝ տուն կը վերադառնայինք:

— Ի՞նչ ըրիք ժողովին, — կը հարցունէր կինս:

— Ի՞նչ պիտի բնէինք, այսօր այդքան կարեւոր հարցեր չկային. միայն տաքթոր Պաշեանի խօսեցաւ, ետքը՝ պարոն Եղիազարեանը, ապա՝ քուէարկութիւնը ըրինք վերջացաւ:

— Դուն բան մը չըսի՞ր:

— Ե՞ս: Չէ, այս անգամ ոչ, բայց յաջորդ անգամ անա՞նկ կարծիք մը պիտի յայտնեմ, անա՞նկ առաջարկ մը պիտի ներկայացնեմ, որ կը տեսնես, պատուէրին բեմէն պիտի խօսի այդ մասին:

Բայց յաջորդ ժողովներուն ալ բերանս չէի բանար: Շատ-շատ մտքէ՛ս կարծիք կը յայտնէի: Երբեմն ա՛յնքան կը տաքնար միմնաւորաբար ու ժողովը ա՛յնքան կ'երկարէր, որ ես սափազած իրենց հիւր կը մնայի: Նորէն՝ մէկ ասօր, մէկ անոթ կը նայէի ու կը սպասէի: Բայց ժո-

ղովին ետք, կսլը Արբուհամ եզրօր տեղը անցած՝ ազուսը մը ոնոր կը խօսէի ու մարդը ինծի իրաւունք կու տար եւ ես տեսիլս ոգեւորուած կը խօսէի մեզ յաջորդ հարցերուն մասին:

Երբեմն, կնոջս տղեւ, բայց մա՛նուտանդ երբ ժողովականներէն մէկուն ասոնր հիւրութեան երթայինք, այնպէ՛ս մը կը խօսէի ժողովներուն մասին, որ բարբառ օփ ի բերան կը մնային: Երբեմն ալ կը սպասնայի հրաժարիլ...

Յը մըն ալ մէկը, չեմ գիտեր այդ լուկոսը ուրի՞շ ելու պէմս, բառ:

— Պարոն Փանոս, ինչպէս հիւրութեան դադար տեսնու կը խօսիս, այդպէս ալ համարու՞մ ունէի վրայ, որ ժողովներուն մէջ ալ նոյնն ես եւ համարձակ երայթներ կ'ունենաս: Բայց երբ պարոն Մեյրանին տղեւ ձեք մասին իմ համարումս կը յայտնէի՝ ըսաւ.

— Ան բնա՛ւ չի խօսիր ժողովներուն մէջ: Մինչեւ հիմա նոյնիսկ բառ մը չէ արտասանած: Ճի՞շդ է:

Չդատաստանեցի իրեն, բայց սիրտս վշտացաւ պարոն Մեյրանէն:

Յաջորդ ժողովին, տաղջին առիթով, եւ տաղջին անգամ ըլլալով՝ մասս բարձրացուցի եւ ըսի, որ կարգ մը անձեր անփոյթ կը գտնուին եւ ժողովին անցուգարձերը զուրսը ուրիշներուն կը պատմեն:

Մինչ կը խօսէի, սուր ու յանդիմանական ակնարկ մը սեւեռեցի պարոն Մեյրանի աչքերուն ու մտքէս փեղկվեցի ըսի: Թէեւ ապաշխարած էի, բայց տեղին էր այդ բառը մտովի բսել իրեն: Ի՞նչ իրաւունքով զուրսը ասանկ բաներ կ'ըսէ իմ մասին: Հոպոս եթէ տարածութի՞: Մինչդեռ բոլոր դիս ճանչցողները անանկ համարած եմ, որ եթէ ես չըլլամ՝ եկեղեցին կը դադրի գոյութիւն ունենալէ:

— Պէտք է բացարձակ պաղանաղահալթիւն արիք, — եզրակացուցի:

Բարեբախտաբար, ժողովը միաճայնութեամբ որոշեց յետայսու բացարձակապէս պաղանաղահալ ըլլալ:

Երբ տուն դացի՝

— Կնիկ, — ըսի, — իմ առաջարկս միաճայնութեամբ ընդունուեցաւ:

— Ի՞նչ տաղարկեցիր, — հարցուց կինս:

— Ասիկա ժողովին զազանիքներէն է, — ըսի:

\*\*\*

Ժողովը ինչ ընթացք ալ անէր սահայն, պէտք է ձգէի Պէյրուսը ու Ամերիկա դասի, քանի որ դարձերս օրըստօրէ կը վատթարանային: Միայն Ամերիկան կրնար ըլլալ իմ փրկութեանս լաստը:

Ու եղայ եւ ժողովուրդին աչքին փոշի սրկեցի, թէ երկու տարիէն միլիոնաւէր պիտի ըլլամ: Մինչ այդ, աներհայրս ալ, կեանքը ձեր սիրելիներուն, մահացած էր ու ժառանգը ետեւէս հասած: Տուն մը դնեցի եւ նոր կարած մը բացի:

Ամէն ինչ ըսելու է ու բնաւ հոգս չէ, որ եկեղեցական պաշտօն մը չեն տար ինծի: Մնաց սը, հոս, Ամերիկայի մէջ ինծի արժէքը չաաւելուն պատճառը ինծի հանգէպ եղած յարգանքի պակասէն չի դար: Թո՛ւ, ասոնք ս՞ի են սը: Ես հիմա քաշուած կեանք մը կ'ապրիմ: Առաջ եկեղեցիէ եկեղեցի թափառեցայ, որ դանկ' տեղ մը ժողովի անդամ ընեն. թո՛ւ իրենց, ոչ ոք մտար մատին դարկաւ: Հիմա եթէ ես ուզեմ չե՞մ կրնար ժողովի անդամ ըլլալ, կրնա՞մ, բայց չեմ ըլլար, կը մերժեմ նոյնիսկ եթէ իրենք ուզեն: Թող ասոնք Պէյրուսը ըլլային եւ այդպէս վարուէին հետս, ես՝ այնինչ աղային փեսան...:

\*\*

Ի՛նչ, Սասա սուտաւ, մահուանդ լուսը ինչե՛ր յիշեցուց ինծի, ի՛նչ էինք, ս՛ւր էինք, ս՛ւր հասանք: Եթէ քեզի չհանդիպէինք, թերեւս ես դեռ վերագասնայինք, ս՛չ Պէյրուսը կարենայինք մնալ եւ ոչ ալ Ամերիկա հասնիլ: Քու միջոցովք ամուսնացայ ու եղայ եկեղեցիին մէջ հանրածանօթ այսինչ աղային փեսան եւ սրուն միջոցով ես ալ եղայ ուրիշ հանրածանօթ մը: Եթէ հոս եկեղեցիի մը մէջ ժողովի անդամ չեղայ, հոգ չէ, արդէն տարիքս աննշու վրայ եմ, քիչ մըն ալ հանգիստ պէտք է, միշտ վազել չ'ըլլար: Արդէն ասիկա հանգիստ կեանք չէ՞: Անհրճօրս ժառանգին տիրացանք եւ գործնչս ալ արձանագրել տրինք, բայց դրամը ես կը դանձեմ: Տըզարն ալ մեծցան ու սկսան գործը իրենք գործնել: Բան մը պակաս չունիմ:

Հիմա պատշգամ հասած՝ սուրճ կը խմեմ եւ տեսարանը կը գիտեմ հանգիստ ու երջանիկ:

\*\*

Եկեղեցին ամէն ամիս թերթ կը դրկէ իր անդամներուն, կարճ ըտերը կու տայ, նոր ծնածներուն, մկրտուողներուն, ամուսնացածներուն ու անդարձ մեկնողներուն մասին կը դրէ: Մէկիկ-մէկիկ ամէնքը կը կարդամ:

Յունուարի թիւին մէջ, «Անդարձ մեկնողներ»ու սիւնակին մէջ այսպէս գրուած էր.

«Անդարձ մեկնած է եղբայր Փանոս Փափուկեան: Հանգուցեալը... այսինչին փեսան էր»:

### Ա Ս Տ Ո Ւ Ծ Ո Յ Զ Ո Յ Ը...

Հայ սքուլի վերջին դասաչըջանս էր: Երբ առաջին օրը դասարան մտայ, տեսայ, որ ուսուցիչը նոյնն էր, բայց աշակերտներուն դէմքերը մեծ մասամբ նոր էին:

Կին մը ուշադրութիւնս դրուեց:

Փառիտասանցի կարծեցի: Նոսեցայ մօտը գանուսդ պարսպ աթոսին:

Ուսուցիչը մէկ-մէկ հետաքրքրուեցաւ աշակերտներով. հարցուց անոնց անունները, օրգութիւնը, գործածած լեզուները:

Երբ կարգը ինձի կհաւ, ուղեց, որ գարձեայ կրկնեմ իր դիտցածները: Ըսի անունս, մտկանունս եւ աւելցուցի, որ դիտեմ խօսիլ հայերէն, արարերէն, թուրքերէն, ու չեմ դիտեր խտալերէն, ֆրանսերէն...

Դեռ պիտի շարունակէի, երբ ամէնքը սկսան խնդալ: Կանգ առի:

Կարգը եկաւ ուրիշին, ուրիշներուն եւ, ի վերջոյ, փոքրխոտանցի կարծածիս:

— Դուն ի՞նչ լեզու կը խօսիս, — հարցուց ուսուցիչը:

— Հայերէն:

— Ի՞նչ, — զարմացաւ ուսուցիչը, — ուրեմն դո՞ւն ալ տնոր լեզուն կը խօսիս, — բայց՝ զիս մատնանշելով:

— Այո, — բայց կինը:

— Թոտեղէք նոյնիք, — թելադրեց ուսուցիչը:

Ես, որ հաղիւ «արմինիւն»ը լսած էի ու խորհած, որ լսածս սխալ պէտք էր ըլլալ, ուսուցիչին ստիպումով գարձայ կնկան ու հարցուցի.

— Հայերէն կրնա՞ք խօսիլ:

— Այո, — բայց՝ գրեւոր շարժելով:

Բայց չիտթը դեռ կը շարունակուէր մտքիս: Կարծես հարուած մը ստացած էի գլխուս եւ անոր ազդեցութեան տակ կը մտածէի, թէ այս փոքրխոտանցի կինը ինչպէ՞ս կրնար հայերէն դիտալ:

Երբ կարգը ուրիշներուն եկաւ, սկըսայ ուշի ուշով զննել դէմքը: Կամացկամաց պարսիկ կարծեցի զինք, պարսկուհի, բայց սիրտս նորէն չհանդիպաւ: Մինչեւ Պալատտ բերի. անկեղծօրէն հոն ալ յարմար տեղ մը չգտայ իրեն: Մտխուրեցայ մինչեւ Հայէպ ասնիլ եւ Խորթլաի սաղին հարաւարեւմտեան կողմը բնակեցուցի, բայց...

Դադարին, երբ միւսները մեծ մասամբ դուրս ելան, ինք տեղը մնաց: Մօտեցայ իրեն, հարցուցի.

— Ինչպէ՞ս եւ ո՞ր սորված էք հայերէնը:

— Ես հայ եմ, — ըսաւ, — ու յայտնեց, թէ Պէյրուսի է, Պէյրուսի հարաւարեւմտեան կողմէն: Զարմացայ մնացի: Չէի կրնար հայ ըլլալու գաղա-

փարին հետ հաշտուել, ո՛ւր մնաց Պէյրուսիէն ըլլալուն:

Քանի մը շարաթ ետք, երբ ուսուցիչին մօտ աշակերտի մը կը սպասէի, մեծ ուշադրութեամբ դիտեցի զինք եւ կամաց-կամաց սկսայ հայաւ նմանցնել: Չէ, հայ էր:

Այսպիսի հանդիպումներ կը պտտահէին: Թորէնսի Հայ սքուլին մէջ ուրիշ հայերու հետ ալ ծանօթացայ ու բարեկամացայ:

Այս վերջինին հետ ալ սկսայ մտերմանալ: Համակրելի կին էր, շատով բարեկամութիւն հաստատուց տեսակէն, սիրար բաց:

Դադարներուն, երբ դուրս ելլէի՝ քալելով քիչ մը կապուսուելու համար, շատով կը վերապտանայի դասարան, քովը կը նստէի, մտիկ կ'ընէի զինք, որ միշտ հեռաքրքրական բան մը կ'ուսնեմար բտելիք:

Ամուսնական տարիքին հասած տսեն ձեռքը խնդրողներ շատ ունեցած է, բայց «ոչ» ըսած է ամէնուն ու ետ ճամբած: Թեկնածուներէն մէկը, Եղիպտոսէն եկած գերասան մը՝ իրենց համայնքին պատկանող եկեղեցիին մէջ տեսած է զինք ու շատ հաւանդ:

— Ի՞նչ լաւ տղայ էր: Այն ստեղծներն ես ալ կը սիրէի գերասանութիւնը: Նոյնիսկ հիմա, երբ շարժանկարի երթամ, «ա՛խ» մը կ'ելլէ բերնէս: Շատ կը սիրեմ դերեր վերցնել: Դպրոցն ալ, ամէն տնդամ, որ թատերգութիւն մը բեմադրէինք, որտեղ Սարգիսեանը լուսպոյն դերերը ինձի կը վստահէր: Ծիչդ ուղածիս պէս տղայ էր Եղիպտոսէն եկածը: Վստահ եմ, որ ամուսնանայէ ետքն ալ երջանիկ պիտի ըլլայինք, քանի որ նոյն կոչումը ունէինք երկուքս ալ, բայց մայրս չուզեց: Այն տարիներուն ես ալ խելօք էի, անփորձ ու լուս ու չէի կրնար մօրս որոշումներուն ընդդիմանալ: Ա՛խ, իմ բախտս: Մայրս սխալ բրաւ, զիս պէտք է անոր տար: Թերեւս մինչեւ հիմա հանրածանօթ գերասանուհի մը կ'ըլլայի:

Ըսեց քիչ մը, եւ յետոյ՝

— Համբարբը գիտե՞ս :

Ոչ բռեբաւ պէս՝ գլուխս շարժեցի :

— Համբարբ անունով մէկը կայ եղե՞ր, չի ծխեր եղե՞ր, ամէն շաբաթ կանոնաւորաբար եկեղեցի կ'երթայ եղե՞ր ու ծնողքը շատ հանդիտաւ եղե՞ր :

Ամէն անգամ «եղե՞ր» ըսելուն՝ ջրգային նայուածք մը կը նետէր վրաս, տնայէն՝ որ կործես եւ ըլլայի յանցատուր :

— Մայրս անոր տուաւ գիտ, Համբարբին եւ ես ոչ չկրցայ ըսել :

Դտար սկսած վայրկեանին կը դադրեցնէր խօսակցութիւնը ու կ'ըսէր .

— Յաւո՞ւմ չձանձրացուցի :

— Չէ, — կ'ըսէի, — հոգ չէ :

Մերտը կը հանդարտէր ու այդ պահուն կը նախանձէի իրեն, որ մտիկ ընող մը ունի : Ուրիշներ գիտ բնաւ մտիկ չեն բրած, ու ասիկա՝ մանկութենէս ի վեր :

Անո՞ւմ մը, բաւ կը յիշեմ, ձեռքս աստղծի մեքենային գանակէն վերաւորուցաւ : Մարդիկ անկեղծօրէն հարցուցին, թէ ի՞նչ եղաւ, բայց, հաղիւ պատմելու սկսած՝ կը ջղաճանայի, չէին ձրգեր, սը պատմեմ, ու այն համոզման եկայ, սը մարդիկ ուրիշներուն ասողական վիճակը կը հարցնեն՝ պարզապէս իրենց ցուր պատմելու համար :

Դասէն ետք կը անտնար, որպէսզի շարունակէ պատմութիւնը, նկարագրէ ամուսինէն իր քառածները, տառապանքները :

Կ'աշխատէի մխիթարել գինք .

— Այդ ի՞նչ տեսակ մարդ է, — ըսի օր մը, — սը ձեզի պէս մէկու մը քով բնաւ չէ փոխուած :

— Ինչ տեսակ պիտի ըլլար, մօրը դահը, աւելի ճիշդ՝ Աստուծոյ գահը, — բաւ :

Ամէնէն աւելի ես կը զգայի իր վիճակը, քանի որ ես ալ նոյնանման միջավայրի մը ծնունդն եմ, կրօնակա՞ն միջավայրի մը . . .

Սկստնք միասին քննադատել ամէնքը, Աստուծմէ սկսեալ մինչեւ մեր պապա-մամաները, զպրօցն ու սուսցիչները : Ամէնքն ալ յանցաւոր էին :

— Ինքզինքս կ'ուտեմ, — բաւ, —

շատ կը ջղաճանամ ամուսինիս պապա-բխութեան երեսէն : Մեր ուղղութիւնները բարբառիկն տարբեր են : Անոր բնաւ հոգը չէ, թէ ի՞նչ տառապանք կ'ապրիմ : Աստու գործի կ'երթայ : Իրիկունը՝ կը նստի մինչեւ քնանալու ժամը եւ, առանց բաւ մը բռնիս՝ յաջորդ օր գործի կ'երթայ : Բան մը չի գիտեր : Ոչ մէկ բանի մասին գաղափար ունի : Յանցաւորը միշտ մայրս է : Թող այրէի՞, բայց ուղարկու գի՛րկը այրէի : Ամէն շաբաթ եկեղեցի կ'երթայ եղե՞ր : Ա՛խ, այս քրիստոնէութիւնը, թէ՛ ազգիս գլուխը կերաւ, թէ՛ իմ : Երբեմն կ'անիծեմ, կ'անիծեմ բարբը, սը ինձի Աստուծոյ մասին խօսեցան : Յիսուս ինքն էր, սը բաւ . «Կայսեր բաժինը կայսեր տուէք, Աստուծոյ բաժինը՝ Աստուծոյ» : Բայց մեր մայրերը, ուսուցիչները, քարոզիչները միայն Աստուծը շեշտեցին : Ես հակառակ չեմ Աստուծոյ : Նոյնիսկ եթէ Աստուած գոյութիւն չունենար, պիտի ուզէի, սը ինձի համար յախտնապէս գոյութիւն ունենար : Բայց հիմա անանկ զըլած եմ Աստուծոյ անունը բերանը անողներէն, որ ուղղակի կը խորշիմ : Չեմ գիտեր ուրիշ ի՞նչ : Միայն Աստուած չէ, սը կայ : Ուրիշ բաներ ալ կան : Նոյնիսկ Աստուած երբ եղեմի պարտէզը ստեղծեց, ապաստութիւն տուաւ Ազգամին ամէն ինչ բնելու, արդիւրած էր մօտենալ միայն կեդրոնի ծառին : Հիմա այդ կեդրոնի ծառը չկայ : կը նշանակէ, սը ամէն ինչ ընելու ազատութիւն ունէինք : Ուրեմն ինչո՞ւ մեր մայրերը մեզ կ'աշխատեցնէին՝ Աստուծոյ վայելի մէջ մեծցնելով մեզ : Իրականութիւնը բռեմ : Ամէնքս ալ մենք մեզ կը խաբենք, ու ամէնէն շատ ապաշխարողները իրենք գիւրենք կը խաբեն :

Վստահ էի, սը կեանքի փորձութեանն աջակէս կը խօսէր, սրտհեռու բերանը եկածը խօսող կ'ընէին չէր, ու ս'ըբան խօսէր, ս'ըբան կը հանդարտէր ու պարզուած սրտով տուն կ'երթար :

Տուն կը հասնէի՝ լսածներուս ազդեցութեան տակ : Ճիշդ կ'ըսէր, ճի՛շդ : Երանի թէ բնաւ Աստուծոյ մասին լսած չըլլայինք, մենք մեզի հետ ըլլայինք միայն :

\*\*\*

Աստուծո՛ւ մը, կըր գործի կ'երթայի՛ ինքնաշարժ մը տեսայ, սրուն ասուերը կը կողմէին «Բաթ» բտոր: Մտքէս ըսի. ա- սիկա Յակոբի ասաներկու գուաղիներէն մէկուն անունն է: Ետքը, սկսայ ինքնի- բնս հարց ասլ, թէ մեզի ի՞նչ Յակոբին ասաներկու գուաղներուն անունները, ինչո՞ւ գոյրոյին մէջ ալս բաները գոյ սորվիլ տուին ու չտարվոյներն ալ ցած նիշերով տուն ճամբեցին. մեզի ի՞նչ ալս բաները: Հոս, Ամերիկայի մէջ, միայն Ամերիկայի պատմութիւնը կ'աւանդեն:

Իրիկունը իրեն պատմեցի մտքէս ան- ցածները:

— Ես'ա շիտակ ես, — ըտա ու ա- լելցուց, — մեր մայրերը աւելի կարե- լարութիւն կու տային Սուրբ Գիրքին, քան հայոց պատմութեան: Ո՞ր մէկը ա- լելի կարեւոր է, Սուրբ Գի՞րքը, թէ Հա- յոց պատմութիւնը:

— Անշուշտ Հայոց պատմութիւնը: Ետքը հարցուց:

— Ո՞ր պատմութիւնը աւելի մաքուր է, Արա Գեղեցիկի՞ն պատմութիւնը, թէ Ղոյտի աղջիկներուն արարքը:

Մտառփեցայ:

Այլ ուրիշ՞ ինկաւ միտքը: Ծանօթ էի Ղոյտի աղջիկներուն արարքին: Իրենց հօր հետ պատկած էին ու սերունդ առաջ բերած:

— Անշուշտ թէ Արա Գեղեցիկին պատմութիւնը գեղեցիկ է, — ըսի:

— Այն ատեն ինչո՞ւ եկեղեցիներուն մէջ Արա Գեղեցիկը օրինակ չեն բերեր ու խորեհայ Յակոբներն ու Ղոյտերը օրի- նակ կը բերեն. շիտակ չե՞մ:

— Այո՛, անշուշտ:

Նայեցայ ժամուն ու հարցուցի.

— Ամուսինդ չի՞ վշտանար ուշանա- ըուդ համար:

— Ինչո՞ւ պիտի վշտանայ: Ուրիշնե- բուն պէս ժամերով տունէն դուրս չեմ ելլեր: Միայն դասի համար կը բացակա- յիմ եւ ասո՞ր համար պիտի խօսի: Ան- կեղծօրէն, հոս քիչ մը կը փոխախմ: Յա- ճախ կու բամ ասանճնութեան մէջ: Գո-

նէ գնահատել պիտնար: Կեանքի ընկեր կ'ըսեն: Ի՞նչ է կեանքի ընկերը: Այսպէ՞ս կեանքի ընկեր կ'ըլլան: Երբեմն շատ կա- ըւար բաներ կ'ըսեմ, բայց ինք պտտա- խոն անցամ չէ տար: Ո՛չ, մենք բնա՛ւ յարմար չենք իրարու: Փոխանակ հոգիիս թափանցելու եւ պիս գանելու, անտար- բեր կ'անցնի մտաէս: Մենք միայն մար- միկներով ամուսիններ ենք: Այգէկ, սր պան կաս եզեր:

Փունի մը անգամ պիս իր տունը հրա- յելեց:

— Եկուր, բեցի համով ճաշ մը կեր- ցընեմ, ամուսինս հետ ալ կը ծանօթա- նաս:

Ամէնէն չսիրած բաներէս մէկը եղած է ճաշի հիւր ըլլայր: Այլ պատճառով պատարուակներ կը ստեղծէի, կը յետա- ճոյէի, բայց նոյն ատեն հոչակաւոր ա- մուսինը տեսնելու բուն փափաք մը կ'արթննար սրտիս: Պատճառին համա- ճան՞ մարդը կ'երեւակայէի վերաբիւն ուսերուն, նտարտնին վրայ նտած, համրիչը ձեռքը, կէս բուն կէս արթուն վիճակի մը մէջ:

\*\*\*

Իպրոցին աւարտէն անմիջապէս ա- ստջ, իր ստիպումներուն վրայ, որսչեցի տունը կրթալ: Միտքս կէս ժամու չափ նտաիլ էր միայն ու ամուսինը տեսնել: Ծիչդ որսչուած ժամուն դարկի դբան պանդր: Իտարնկերուհիս բացաւ դուռը.

— Հրամէ՛, հրամէ՛, — ըսելով հիւ- բտանեակ տաջնարդեց պիս:

Տրամադրութիւնը բաւական բարձր էր ու ես ալ, տտաջին մէկ վայրկեանէն, տունիս պէս դրացի: Իրմացը, ճաշարա- նին մէջ, պեղեցիկ սեղան մը շտկուած էր: Մերաս նեղուեցաւ: Այս կինը պիս ճաշի պիտի նտակցնէ, անցաւ մտքէս:

— Ամուսինս հիմա կու գայ, — ը- սաւ:

Քիչ մը պատշգամ ելանք, ապա՝ պը- տրացոյց պիս ասն միւս սենեակները: Գոյցը բոյր մը բանած էր չորս կողմը եւ ինք, ալս մթնոլորտին մէջ, աւելի դե-



դեցկացած ու երիտասարդացած կը թը-  
ւէր ինծի :

Նորէն հիւրասենեակ եկանք : Անհամ-  
բեր էր : Յաճախ պատուհանէն դուրս կը  
նայէր :

— Զարմանալի է , այսօր շատ ուշա-  
ցաւ ամուսինս , — կը կրկնէր :

Զղպի , թէ արամադրութիւնը հե-  
արզհետէ կը նստալի : Երեւի կը վախնար  
վասնզէ մը :

Ժամ մը ետք ոտնոձայն մը աւինք :  
Երու ոտքի եւ դէպի դուրս շտապած ա-  
տեն ինծի գտնանալով՝ դժգոհ ակնարկ մը  
նետեց վրաս : Պատճառը չհասկցայ : Եր-  
վաթեցայ մնացի :

Ծանօթացայ զիս ամուսինին հետ :  
Մտրվը ձեռնուեցաւ հետս ու գործի հա-  
զուտութիւնս նստեցաւ մօտս : Ու երբ կինը  
տխուր-տխուր անցաւ կերակուրը պատ-  
րաստելու , ես եւ ամուսինը սկսանք զը-  
բուցել :

— Յոգնած կ'երեւիր , — ըսի :

— Այո , — ըսաւ :

Ետքը ուղեց ղխանալ , թէ ս՞ի եմ եւ  
ուրիշ՞ կու գամ : Ստոած մնացի : Արդ-  
եօք կինը չէ՞ր պատմած իմ մասին : Սկը-  
օտյ բացատրութիւններ տալ : Ամէն ան-  
գամ , որ բան մը ըսէի՝ անա՛նկ կը շար-  
ժէր գլուխը , որ կարճեա ընաւ նման բան  
չէր յաճ : Այն ապուրրութիւնը առի , որ  
առաջին անգամ կը լսէ Հայ սքուլ բառը :

— Հայ սքուլ , իրա՞ւ : Նազենի՛կ ,  
տե՛ս , սա ալ Հայ սքուլ կ'երթայ եղեր  
եւ քու գտարանդ է . նայէ՛ , նազենի՛կ :  
Ապա՛ ինծի գտնանալով .

— Դո՛ւն ալ տխրումս պիտի աւ-  
նես : Հայ սքուլ տխրումս կու տա՞ն :

— Այո , եթէ աւարտես :

— Ես՛ , ես՛ . . .

Յետոյ , երբ կինը եկաւ , անակնկալի  
եկածի պէս ըսաւ .

— Տե՛ս , Նազենիկ , սա ալ տխրումս  
պիտի ամնէ եղեր :

Կնկան հարցոյցի , թէ երբեք չէ՞ր  
պատմած իմ մասին :

— Հարկը անգամ պատմած եմ , —  
ըսաւ՝ ճղալին ձեռքերը զոյնոյնին դար-  
նելով :

Մտրվը կը շարունակէր հարցեր տալ .

— Ի՞նչ գտեր կու տան Հայ սքուլի  
մէջ :

Բացատրեցի :

— Տե՛ս , Նազենիկ , Հայ սքուլի մէջ  
անդէրէ՛ն ալ կու տան եղեր :

Խնդարս կու գոր , բայց կը գտէի  
ինքզինքս , միաժամանակ ցաւելով կըն-  
կան վիճակին : Ուղղակի այրած էր :

Երբեմն կինը կը հարցնէր .

— Համբար , եթէ տսիկա այդպէս ըլ-  
լայ՝ աւելի լաւ չ'ըլլա՞ր :

— Այո՛ , այո՛ :

Կամ՝

— Համբար , տսիկա ասանկ լաւ չէ ,  
չէ՞ :

— Զէ՛ , չէ՛ :

Քիչ ետք , կինը սեպան հրաւիրեց  
մեզ : Այօթեցինք եւ սկսանք ընթրել : Կե-  
րակուրք համով պատրաստուած էր , լաւ  
էր ամէն բան , բայց գասընկերուհիս  
արամադրութիւնը աւելի ու աւելի կը  
մթաղնէր : Թերեւս տաս անգամ հրաւի-  
րած էր զիս եւ կը կարճէի , թէ հրաւէրը  
բնորոնած օրս շատ պիտի ուրախանայ ,  
բայց այդպէս չէր երեւեր : Ամուսինին  
հետո՞ւ բոզէէն սկսաւ մտալիլ : Թերեւս  
զըջոյց դայն ինծի ծանօթացնելուն հա-  
մար , կ'ըսէի մտքէս :

Ընթրիքէն ետք , հիւրասրահին մէջ  
գարձեալ զէմ զիմօց նստանք մարդուն  
հետ : Պատմեցի անցեալ շարաթափերջ  
ձկնարտութեան երթալու եւ ասանց ձուկ  
մը բռնելու տուն վերադարձս : Բայց ը-  
սի .

— Երկու խոշոր ձուկերու լողալով  
անցնիլը տեսայ :

— Կը լողայի՞ն :

— Այո՛ , այո՛ :

Այլեւս չէի կրնար մնալ : Հազիւ  
սուրճը խմած՝ սաքի ելայ , մնաք բաղով  
բսի ու գուրս ելայ :

Երբ ինքնաշարժ նստելու կը պատ-  
րաստէի , գասընկերուհիս ետեւէս հա-  
սաւ ու հարցոյց .

— Ինչպէ՞ս տարուրուեցար ամու-  
սինէս :

— Աստուծոյ զսէր , — ըսի կարուկ :

Յանկարծ ի՞նչ պատահեցաւ, չհասկացայ. պարծաս երկի՞նքը սովորակեցաւ, կարկուտ տեղաց, ի՞նչ պատահեցաւ. կնկան, սաստիկ յշտացած տեսայ գինք եւ երթոք բարսօլի փոխան՝ ճչաց.

— Աստուծոյ մեծապոյն զոհը զս'ըք էք, հետոյէ՛ք...

Պահ մը ստամ մնացի: Ետքը ինչօքէ՞ս տուն գացի՛ չեմ գիտեր: Կարծեմ կարծիք լոյսերուն կեցայ, կանոն լոյսերուն՝ քայլացի. կարծեմ չարքոյղ լոյսին աջ գարձայ, ապա նորէն աջ, ձախ: Կարծեմ կաստան դուր բացի, ինքնաշարժը ներս գրի: Անշուշտ, գիշերանոցս վերագարձէս ետք պէտք է հապած ըլլայի. հայելիին մէջ տեսայ գէմքս: Կարծես մէկու մը հետ կուտամ էի, մաղերս խառնելուսն եզրած էին, տկանջներս՝ կորմբած, եւ դեռ ի՞նչ գիտնամ ի՞նչ պատահած էր: Ազս'ւշ, կ'ըտէի ինքնիրենս, ազս'ւշ, ամիսներէ ի վեր սջխարի պէս մտիկ ըրիք՝ այս վիճակի՞ն հասնելու համար: Ինչո՞ւ այդպէս բարկանայթ խօսեցաւ հետս, իր մտքին մէջ ինչո՞ւ յանկարծ ես գարձայ Աստուծոյ մեծապոյն զոհը:

Գիշերը չկրցայ քնանալ: Մեծ դաս մը ստամ էի. ե՞րբ դաս ստամ չեմ որ: Օր նոր, փորձութիւն նոր: Ամէն օր կ'իյնայի, բայց փորձասու չէի եղած:

\*\*

Մէկ դաս մնացած էր, քննութիւնը, ու զտրտը պիտի վերջանար: Գացի՛ անարամագիր վիճակով: Ինքնաշարժը շատ հետուն գրի:

Դասին՝ երբեք իմ կողմը չնայեցաւ: Կ'ուզէի շատ վերջանայ ամէն բան, ու տուն վերադառնալ:

Հարցումներուն արագ մը պատասխանեցի, երայ դուրս, բայց ինքնաշարժին գուտը եւ պահ մը ղլխահակ նստած մնացի: Քիչ ետք քալուածքի մը ձայնը տալ: Ինքն էր: Կանչեցի, զժկամութեամբ եկաւ, բոխ.

— Հապա դուն միշտ նոյն բանք կ'ըսէիր:

Արհամարհական խոժոռութիւն մը զժողովուրդեցաւ ղէմքին ու ստանց պատասխանելու՝ քայլաց:

Ձգաջնացած՝ սկսայ քշել ինքնաշարժը: Միշտ կը լիչէի պատահարը եւ մեր բաժանման պատճառը համոզիչ չէր թրւեր ինծի: Ձէի կրնար ձերբադատուիլ այդ մղձաւանջէն ու աւելի կը ջղայնանայի: Միայն չորս կամ հինգ շարաթ ետք, երբ մեքենային վրայ կ'աշխատէի ու մաքսով գեռ կ'որոճայի բաժանուածի մայրկեանին մասին, կարծեցի թէ դասս ղիս չարչարող հարցումին պատասխանը, գասո՞յ, բայց ի՞նչ կ'ընայի ընել, շատ ուշ էր...

ՆԵՐՍԷՍ ՎԻՐԱԳԵԱՆ

Շ Ա Հ Է Ք Է Օ Ր Օ Ղ Լ Ե Ա Ն

Դ ՈՒ Ն Տ Ա Լ Ի Դ Ա,

Ե Մ՝ Ղ Ա Զ Ա Ր Ո Ս

Հետագայ բանաստեղծութիւնը ստարադրագր, պատմութիւնէն հողիւ գուրս եկած երիտաւորդ մը, ատջին սնկամ չէ, որ կը ներկայանայ մեր խմբագրատանը: Մտաւորապէս երկու տարի-նէրէ ի վեր կու գայ ու կ'երթայ, միշտ բանաստեղծութիւններ բերելով ու բերած բանաստեղծութիւնները, յանձնարարուած զիր-քերու ու կարգ մը թերագրութիւններու հետ՝ ետ հետը տանելով:

Վերջին սնկամ նորէն բերու. փունջ մը բանաստեղծութիւն-ներ, որոնց համեմատական արժանիքները բարբառին մտայնել կու տային իր ատջին շարքերուն յղացաչին թէ սճական նախ-նակածութիւնները, ըսելով մեզի նոյն ստեղծ, թէ եկած է զբա-կանութեան այս նորընծային արագութեան ժամանակը:

Շահէ Քէօբոզիան մեզմէ աւելի լուս դիտէ հիմա, թէ այս մտայնին մէջ ի՞նչ կ'ենտաու ուժեր են համեմատութիւնն ու յամառ հեռեւորակածութիւնը և. փաստ էնք, որ այսուհետեւ եւս ոչտի հեռուի շատ երեւոյալու մարմնային փոխարկն՝ շատ բան տեսնելի բնծայելու տանջուլից սկզբունքին...

Սերս արբնցաւ աչկերուդ մէջ,  
 Եւ աչկերդ, շարժումներդ, բասերդ, խաղերդ,  
 Լարե՛րը սրտիդ, յոյզերդ,  
 Երագներդ, նոր օրերդ, ներաշխարհիդ

Փնտաւեցիմ

Իրենց եայելիմ  
 Ու արձագանգը

Եւ գտան...

Բայց պայմանները,  
 (Որոնք նակատագիր կը կոչուին երբեմն)

Մեզ բաժնեցիմ

Ու Անանխաղ հոյոց պատմութեան,  
 Անանխար մե՛ք նոր պատմութեան,  
 Անանխար սէր, ծե՛ր՝

Վիժում ունեցաւ

Եւ վիժածները երկուտրեակ էին,  
 Բայց ոչ ոք գիտցաւ...

Եւ վիժումը այդ  
 Երեւո՛յք մնաց,

Որովհետև մեր նոր պատմութեան Անահիտը սէր  
 Երկուտեակներուն տուաւ զազունիքը  
 Իրարմով ապրելու, իրարմէ անջատ,  
 Իրարմով սյրելու...

Բաժնուեցանք քէտ մենք,  
 Բայց իմ կէսս մնաց ինձի,  
 Եւ քու կէսդ՝ մի՛շտ ինձի հետ,  
 Մի՛նակութեանս, ինձնութեանս ու եսիս պէս:

Անցան տարիներ,  
 Եւ տասերը մեր ինձնութեան  
 Կրկնապատկուեցան  
 Եւ երկուսով կատարուած բաժանումին արդիւնքը  
 Մնաց միշտ գոյգ՝ 14...

. . . . .

Եւ օր մըն ալ,  
 14իդ բերեալստաւի՛ն կարօտով՝  
 Վերադարձայ ափսոսալայրէս:

Վերադարձայ .  
 Եւ սակայն ափսոսալայրս դարձաւ նոր վայրէ՛ն նախընտրելի,  
 Ծննդավայրէ՛ն, միջավայրէ՛ն, բերդավայրէ՛ն նախընտրելի:

Փնտռեցի ճեղ,  
 Օտար էիր .  
 Էութիւնդ օտար կը թուէր, ինչպէս՝ իմս:

Փնտռեցի ճեղ,  
 Դուն կայիր ու չկայիր,  
 Հեքիաթին պէս,  
 Ուր դերակատարները երկուտեակ էին; ես էի եւ դա՛ւն:

Փնտռեցի ճեղ...

Ու կարծելով, որ նայն բառերը պիտի լսեմ,  
 Թակեցի սրտիդ դուռը, մտքիդ դուռը,  
 Դեռ,  
 Կարծելով, որ այս է վերջը երազներուն, երազելուն,

Այս է վերջին կաթիլը շատրուանին,  
Որ տարիներ ոռոգեց անապատիս երազները,  
Նկայ,  
Եւ սակայն...

Եւ այսպէս է,  
Որ կը մեռնին վիժածները,  
Ինքնուրեւան ու ժամանակի շարք վիճողները...

Եւ որովհետեւ ես այս կարծիքը հաստատի վերածեցի,  
Որոշեցի երազներուս շիջումէն առաջ  
Մեռնիլ...

. . . . .

Կուսն տանձին մնացիր հպարտանքիդ գանիկ հետ.  
Զգացիր անիմատուրիւնը սրտիդ սրտիին, անարձագանգ հոգիիդ,  
սառու սրեանդ, դիմակ էութեանդ,  
Ու ջանդեցիր գահը հպարտանքիդ.  
Փնտռեցիր զիս. բսին, որ բեզի համար մեռայ,  
Ըսին, որ զլջումիդ մատները շնչանեզձձ քրին բեզ:


. . . . .

. . . . .

Մնացինք այդպէս հիշք 654 օր,  
Ու վերջին օրը, առաջին անգամ, երազիս մէջ,  
Շատուց վախճանած մեր Անահիտը, մա՛յր Անահիտը  
Երեցաւ ինձի, կայծ տուաւ սրտիս  
Ու երեխայի պէս առաջնորդեց զիս  
Քու սնույքիդ եւ իմ անդունդիս միացման կէտին,  
Ուր երբ բեզ տեսայ, ու երբ զիս տեսար,  
Անահիտը հեռացաւ, երազ դարձաւ,  
Իմ երազը, էս. երազդ  
Բնական գոյներով՝ կեանքի պատաստին վրայ նկարելէ ետք...

. . . . .

Ու դուն՝ սաքի ելած՝  
Տալիդային պէս,  
Ու ես՝ յարուցեալ  
Ղազարոսին պէս,  
Միասնաբար փնտռեցինք մեր գրաւիտը...



ROMANCIER, NOUVELLISTE, DRAMATURGE

## WILLIAM SAROYAN: "C'est la rue qui a été ma véritable école"

Volubile, chaleureux, plein d'anecdotes, faisant confiance à l'imagination à condition qu'elle s'appuie sur une solide réalité : tel est William Saroyan, romancier, nouvelliste, dramaturge, né en Californie de parents émigrés arméniens. Il assure que, depuis 1934, il n'a pas gagné un dollar hors de ses droits d'auteur : bel exemple d'écrivain à part entière qui, sans avoir renié le « folklore » de ses origines — auquel il fait une place dans ses œuvres — appartient malgré tout et d'abord à la littérature américaine contemporaine. Il parle

ici de sa « tribu », de son difficile début de carrière, de ses goûts esthétiques et de sa méthode de travail.

— A l'orphelinat, j'ai appris certaines choses essentielles : par exemple, que chacun de nous forge sa propre identité et qu'il en est ensuite à jamais responsable.



— Vous êtes de parents arméniens émigrés en Californie; Benjamin de quatre enfants, vous êtes le seul de vos frères et sœurs à être né aux États-Unis. Qui étaient les Saroyan et d'où venaient-ils exactement ?

— Ils venaient d'un village appelé Dilis, dans les montagnes d'Arménie. La famille se composait de

deux branches, très différentes; l'une d'elles assez florissante et l'autre — à laquelle appartenait mon père — moins riche et davantage tournée vers la culture. En 1895, la situation de la minorité arménienne commençait à devenir critique en Anatolie. Après avoir fait le tour de précédents historiques concernant d'autres minorités similaires à travers le mon-

Այս տարի գրական մեր հսկաներէն Ուիլերմ Սա-  
րայեանի ծննդեան 70ամեակն էր, որ նշուեցաւ հայա-  
շատ բազմաթիւ գաղութներու մէջ, ու մեծ շուքով՝  
հայրենի երկիրէն տակ, ուր կազմակերպուած հան-  
դիսութեան ներկայ ըլլալու հրաւիրուած էր նաեւ ինք  
եւ ներկայ եղաւ ինք:

Այդ առիթով, հոն թէ Սփիւռքի մէջ հրատարակ-  
ւեցան թարգմանական հաստրներ, հանդիպումներու  
ժողովածուներ ու շարք մը նոր գրոյցներ ու վերլու-  
ծական քարմ յօդուածներ:

Մեր քաղաքը, հասկնալի պատճառներով, չկրցաւ  
իր նախահոնուքիւններով մասնակցիլ մեծ գրագէտին  
առիթով ծառայած համարումի այս համատարած ա-  
լիքին եւ բաւարարուեցաւ միւս գաղութներուն ձեռ-  
նարկները տրուագծոյ լուրերու հաղորդումով:

Բազմավաստակ ու մեծահամբաւ գրագէտին հան-  
դէպ այս չէր նաեւ «Բայիկ»ի գգացած պարտքը, բայց  
միեւնոյն պատճառով ստիպուեցանք յետաձգել Սա-  
րայեանին ամբողջ թիւ մը նուիրելու մեր ծրագիրը:

Այնուամենայնիւ, չէինք կրնար ներկայ տարին  
գոցել առանց յիշատակելու Սարայեանի 70ամեակը,  
ուստի բացինք այս էջերը, որոնք թիւով սահմանափակ  
են թէեւ, բայց գգալի չափով մը կը պատկերացնեն  
անոր աշխարհին բնորոշ գիծերը, լոյսերը, բարախում-  
ները, մարդկային ու ազգային ասպրումներուն ջերմու-  
թիւնը:

Աւելի լաւ պիտի ըլլար թերեւս հայ ընթերցողին  
բոլորովին անծանօթ էջեր ներկայացնել հոս, բայց,  
մեր մեծ գաղութներէն երկուքին կրած վերջին ցըն-  
ցումներուն գրգումով՝ նախապատուութիւնը տուինք  
Տառասնամեակ մը առաջ գրուած պատմութեանը,  
որոնք անկասկած աւելի խոր արձագանգ պիտի գըտ-  
նեն ընթերցող բոլոր հոգիներուն մէջ եւ, փոխադար-  
ձաբար, հոգիները անոնց մէջ պիտի գտնեն նոր փոր-  
ճութիւնները դիմագրաւելու ոլորտում առած իրենց  
տղտմարդկային էութեան անդրադարձները:

Պարագայական այս մտտեցումէն անկախ՝ մեր  
ընտրած էրկու կտորները հետաւերբակեան են նաեւ ի-  
րենց այն կենսագրութեամբ, գոր նուանեցին անոնք օ-  
տար արժեչափերու մէջ եւ նովին բանլու տեղ գրաւե-  
ցին միլիոնաւոր ընթերցողներու սրտին: Պերսիասոս եւ  
անոնց էջ բացած յատկանշական ժողովածուներու լու-  
սանկարչական պատկերները եւ կրկին անգամ շօշափե-  
լի կը դարձնեն այն փաստը, որ Սարայեան առաւելա-  
բար Սարայեան դարձաւ իր հանդերձած հարագատ նիւ-  
թերով, ազգային տիպարներու ու հոգեբանութեան լի-  
զու տուած նոր գրականութեամբ:

«Կոտրած սնիւր»:

*«Փեղեցիկ սպիտակ ձիուն տմար»:*

Մեր երկրի յուշերուն, լեզուի համերուն, քաղաքի դողերուն մէջ երկնուած ու անզլիախօս աշխարհին պարասպարուած էջեր, պատկերներ՝ մեր կեանքէն, խորհրդանշական՝ երկուքն ալ, կորուստի, կրակիժի, ծիծաղի, լաւատես ապրումներու գեղուն երանգներով:

Գոնէ այս պարագային երբեք պէտք չկայ Սարգեանի այն կողմնորոշող յայտարարութիւններուն, քէկր գործերը առակներ են, այլարանական ընծայումներ, ժառանգական ակօսներով եկած իմաստութիւններու եւ ապրուած փորձառութիւններու երթաւորներով: Ու սխալ չ'ըլլար, երէ ըսեմք, որ *«Կտրած սնկեր»* իր ժողովուրդն է, մեր պատմութեան ընդհատումին խորհրդանշիչը, ու պատմութիւնը շարունակելու հայ մարդուն ներգոյակ ուժին դիւցագներգութիւնը նոյն տանն:

— *«Լալը անօրում է: Մենք միշտ սենեցած ենք մեր դէշ օրերը, եւ միշտ այլ օրերը յազթահարած ենք ու պիտի յազթահարենք»:*

Գարեյու հեռուներէն եկող փորձառութիւնը կըրկնող մօր խօսքն է, յիշեցուած՝ բոլոր հայ մայրերուն կողմէ եւ ունկնդիր որպիները, սերունդ առ սերունդ, հաւատարմօրէն կիրարկած են պատգամը ու, յաղթահարելով դժուար օրերու դժուարութիւնները՝ սփռած են իրենց հոգիներուն լոյսը աշխարհի քառուղիներուն:

Ու այդ սերունդներուն ներկայացուցչական տիպարներէն մէկը ի՛նք՝ Ուիլերմ Սարգեան:

Երեք տարեկանին՝ որք:

Հինգ տարի՝ որքանոց:

Չորս-հինգ տարի՝ «փոյոցային» քերթավանաս:

Պատանութեան մէկ շրջանը՝ բանջարեղէնի շուկային մէջ խօսնակ:

Առաջին երիտասարդութեան՝ գրասենեակներու երթեւեկող պաշտօնեայ:

Քսանքիինգ տարեկանին՝ Ուիլերմ Սարգեան:

Եօթանասունին՝ ապագրեալ եւ անտիպ եօթանասուն հատրներու անմահ հեղինակ:

Սկսեմք կամ վերսկսեմք կարգալ Սարգեանը, երէ հնարաւոր է՝ ամէն օր կարգալ, որովհետեւ մեր ժողովուրդին ապրած նոր դժուարութիւններուն մէջ կորուստի ապրիւր է անոր գրականութիւնը, հրաշագօր կախարդանք...



Ո Ի . Ս Ա Ր Ո Յ Ե Ա Ն

Քովի սիւնակին արուած լուսնեկարչական պատճէնը կողքի տառլին երեւն է շուրջ հարիւր քսան էջ հաշուող զրքայիկ մը, որ լոյս տեսաւ 1950ին, Ամերիկայի մէջ, «Լեռը» հրատարակչական կազմէ:

Կարեւորը հոս գրքայիկն անունն է, անունը բնաբերու արամագրութիւնը՝


«ԿՈՏՐԱԾ ԱՆԻՒԸ Եւ ուրիշ պատմուածքներ»:

Իբրև խորացիր մեծատառով գրուած «ԿՈՏ-ՐԱԾ ԱՆԻՒԸ» անունն է Ուիլիամ Մարտիանի 1936ին լոյս բնծայած «Ներշնչում եւ արտաշնչում» հոտորին մէջ տեղաւարտուած մէկ նշանաւոր պատմուածքին:

«Եւ ուրիշ պատմուածքներ»ը կը կրեն ստորագրութիւնը ուրիշ եօթը զրոյներու, ի շարս սրանց միջոցային համարուի տէր Սինքլէր Լախու եւ Օլիվեր Լաֆորթ:

Ութ գրող, միլիոններու մտաուցուած ութ պատմուածք, սմբողջութիւնը՝ տառլինին անունով, ու տառլինը, կրկնեց հղարտութեամբ («Եւ ինչն՞ վիտի չեղարտանաւ») պիտիւսկի գաղթական Արմենակին տղուն ստորագրութեամբ...

Մտորեւ տրուած պատմուածքը հայացուած է ինկրոյ ստորկայ հատորէն:



Rich and varied stories of people from many lands who became citizens of the United States and who are also citizens of the world



**SIMPLIFIED READER EDITION**  
The text of this book has been especially prepared for the beginning reader. It has been condensed in length and the vocabulary has been reduced to 2,000 words.

Կ Ո Տ Ր Ա Ծ Ա Ն Ի Ի Ը

Մենք փոքր տուն մը անէինք Մանթա Քլարս պողոտային վրայ, հեռաւար գաւառին մէջ, ուր ամէն սր աղտօքէն կը շրջէր եւ ուր գրայիններ կը սարսուռէին փողոցներ ու եարանք անդին:

Տան շուրջ կային շատ մը ծառեր — երկու հատ մէկ կայմը, երեք հատ անկյան գաւիթին մօտ, եւ երեք հատ՝ ետեւի կայմը: Ետեւի կայմի ծառերէն երկուքը զեղծենի էին: Անոնք պտաստարար բառած էին: Մենք չէինք տնկած զանոնք, սարսուռէն հաւնոտեր նետած էինք հոն եւ ծառերը իրենք իրենց բուսած էին: Տարին անդամ մը քսյս՝ Նայմի, տուն կը բերէր վարդագոյն ծաղիկներէն ոմանք եւ կը տեղաւարէր սեւ ծաղկամանի մը մէջ:

Մենք սովոր էինք տեսնել ծաղիկները սեւ ծաղկամանին մէջ եւ անմիջապէս կը պայլինք, թէ սմբողջութիւնը հոյակապ էր: Այդ կը նշանակէր,

Թէ մենք ոչ չէինք եւ սոփոք էինք խնդալ այլ բարին համար: Չմբան շափացանց խնդացինք: Ատեն մը շատ անտրամադիր, ախար եւ վշտալի կ'ըլլայինք շարաթներով, եւ յետոյ, յանկարծ, ամէնքս մէկ կը սկսէինք խնդալ: Կը խնդայինք տասնհինգ կամ քսան վայրկեան եւ ապա կրկին անտրամադիր եւ ախար կ'ըլլայինք: Այլ բարբը սքանչելի կը գտնէինք եւ նոյն տան կը գլայինք, թէ պէտք է աւելի ախար ըլլար, սրտհեռու. ներքնապէս ցնցըւած ու անպէտք կը գլայինք մենք մեզ:

Յեամբջօրէի մը, եզրայրո՛ Գրիգոր, սուն եկաւ, ձեռքին՝ կասք մը փշածաղիկ: Ան բաւ էնձի:

— Գրեհ<sup>ո</sup>, թէ այս ամբողջ գաւառը ամայի կը ժամանակին, եւ թէ՛ ամէն կողմ փշածաղիկներ կ'աճէին:

— Ըսել կ'ուզես հոս մ'չ սք կը բնակէր, — հարցուցի եւ:

— Այո, — բաւ. Գրիգոր եզրայրո, — ոչ սք՝ բացի կենդանիներէն, ժիջաններէն եւ նման բաներէն: Ա՛չ սք:

Ես մտածեցի տասնց մարդու, տասնց փոքոցներու եւ տասնց տուններու մեր հովիտին մասին եւ գտայ, որ այլ մէկը շատ սարօթնակ կը:

— Ըսել կ'ուզես, — բախ, — Սերմայի երկայնքին եւ Քրոփախ երկայնքին, Քերմանի երկայնքին եւ Սքէկա կամուրջէն անդէն:

— Ըսել կ'ուզեմ ամբողջ հովիտը, — պատասխանեց Գրիգոր, — բախ կ'ուզեմ Քասթ Բէնճոի եւ Սիերա Նեվատայի միջեւ երկարուղ սարածութեան վրայ: Ամբողջ այս գաւառը, որ այժմ սրթատանկ կ'աճի: Այլ օրերուն այս տեղը անջրգի կը. հեռեւարար, մարդիկ սկսան տաւներու միջոցով ջուր բերել:

Այլ յեամբջօրէին, Գրիգոր անկեց փշածաղիկը եւ երբ ես տաս արեկան եղալ, անիկա արդէն կ'արտայտէր սքանչելի կարմիր ծաղիկ մը ու պտուղ մը, որ սք ոչ սք սակել զխէր եւ որ երկարահասակ մարդէ մը աւելի երկար էր:

Պատահարար բաւած քաղաքի ծոռ մը եւս կար մեր անամերձին մէջ: Գրացիին ծառէն հունտեր ինկած էին մեր պարակցը եւ յաջորդ ամառ մենք սնեցանք մեր անձնական փոքր ծոռը: Շատ փոքր էր՝ մազլցելու համար անոր վրայ, սակայն աղուսը, մաքուր բոյր մը ունէր եւ բուսական շուք կուտար: Ամէն սք տակց քաթրի իւզը, բայց մենք խորհեցանք, թէ ծոռը չէր կրնար այլ պատճառով մեղադրուիլ:

Ամբան շրջանին շատ տաք կ'ընէր եւ մենք ստիպուած կ'ըլլայինք վազ առաւօտան արթննալ՝ զով զեփիւար գլալու համար: Ամէն ամառ քաղաքը մեքենայ մը կը զրկէր՝ բարեբաւելու համար փոքոցին վիճակը: Առտուն մենք կը սկսէինք լսել անոր հեռաւոր պում-պում-պումը եւ երբ աւելի մօտենար մեր ասն՝ ձայնը կը լսէինք աւելի եւ աւելի ուժգին, եւ ապա կը հեռանար ու կրկին կը վերադառնար: Սոփոք էինք մտածել, թէ այլ մօտեցումն ու հեռացումը կեանքէն տանուած երեւոյթի մը կը նմանէին, բայց չէինք կրնար ճշգրտ ըսել, թէ ինչ բանի: Հայերէնով կ'ըսէինք. «Եկաւ նորէն», որ կը նշանակէր՝ «հոս է կրկին»: Հարց կու տայինք մենք մեզի, թէ ի՞նչ տարբերութիւն կ'ընէր, եթէ ճամբու մակերեսը քիչ մը խորասարար ըլլար: Ամէն պարագայի՝ ոչ ոք կը գործածէ գայն, բսինք: Բացի ձերանիէ մը, որ ձեր ձիով ու համառ կաւքով կը շրջէր՝ ձմերուկ ծախելով, շատ խնայուած չկար հոն: Աճարարոցները հեծիկ կը դործածէին:

Տարի մը, մօրեղբայրս՝ Վահան, այն տանն երիտասարդ մը, Էփրըսըն մտկինիչ կրող ինքնաշարժով մը Սան Ֆրանսիսքոյէն եկաւ եւ կանոց առաւ մեր տան առջեւ :

— Ինչպէ՞ս գտար ինքնաշարժս, — հարցուց ան, — սմբողջ Ամերիկայի մէջ կան միայն ասանրմէկ Էփրըսըններ, սրանցմէ միայն մէկը կար մեր է :

Մքանչելի ապրում մը ունեցանք եւ ամէնքս խնդացինք, եւ մօրեղբայրս՝ Վահան, սիկորէթներ ծխեց : Շատ հրապուրիչ էր : Մտածե՛լ, թէ միայն մէկ կարմիր Էփրըսըն կար սմբողջ Ամերիկայի մէջ եւ այդ մէկը հօբեղբօսս սեփականութիւնն էր : Ատիկա հաւատար էր բսիլու, թէ մէկու մը մեծ-մեծ հայր սեասծ էր Ապրասամ Լինքոլնը, կամ թէ՛ մէկու մը նախնիքները չըջանին առաջին եկուորները եղած էին : Միայն թէ՛ մօրեղբօսս ինքնաշարժը աւելի ապուսրիչ էր : Կը զբայէր, որ անխնայու վրայ հանուած մեքենայի մեծ ու կարմիր դանդուած մը սրտապով պիտի դառնար անհիւնէն եւ կանոց պիտի առնէր տանոց առջեւ, եւ ատիկա մեծ բան մըն էր :

Մօրեղբայրս՝ Վահան, մեզ բարբա պատյախ տարաւ — նախ՝ մայրս, ապա՝ երկու քոյրերս եւ, ամէնէն վերջը՝ Գրիգորն ու զիս : Յետոյ, ներս մտանք՝ Թրքական սուրճ մը տոնելու : Մենք կը լսէինք իր ձայնը, երբ մօրս կը պատմէր, թէ ինք ինչպէս անցուցած է իր ըննութիւնները եւ այժմ փաստարան գարձած, սակայն ան իր զբամին մեծ մասը կուտակած էր ձմերուկ ծախելով : Մայրս շատ կ'ուրախանար իր փոքր եղբորմով եւ հետը շարունակ կը խնդար եւ հարցումներ կ'ուզէր :

Ապա, մօրեղբայրս փոքրերուս ըսաւ, որ մենք չէինք պիտեր, թէ որքան բախտաւոր էինք այսպիսի քաղաքի մը մէջ ապրելով : Անտահման պատեհութիւններ կան հոս, ըսաւ ան : Ամէն ոք ազատ է եւ կրնայ իր կարողութեան ներսո՞ շտիով հեռուն երթալ : Հայերէն խօսեցու, սրովհետեւ իրեն համար այդ մէկը աւելի դիւրին էր : Տասներեք տարեկանին եկած էր Ամերիկա եւ այժմ քսաներկու քին մէջ կը դանուէր :

Օր մը կամ երկու օր ետք, մօրեղբայրս իր կարմիր Էփրըսընով մեկնեցաւ եւ մենք սկսանք յիշել իր այցելութեան բոլոր մանրամասնութիւնները, սրանց նախապէս շատ ուշադրութիւն չէինք բնծայած :

Մեր ասն մէջ ամէն ինչ անփոփոխ էր, եւ մենք չնկատեցինք ամխաներու եւ տարիներու անցքը : Յեամիջօրէի մը, Գրիգոր ասն եկաւ փոքր սեւ պոյուսակով մը եւ զայն սեղաւորեց ձաշառեղանին վրայ. ամէնքս հաւաքուեցանք՝ տեսնելու. համար, թէ ինչ կայ մէջը : Երբեք չէինք կրնար քուշակել Գրիգորին արտաքններս, եւ միշտ պատրաստ էինք իր անակնկալներուն : Գրիգոր շատ ջգտգրղիւ էր ու լուս : Բացաւ պոյուսակը եւ մենք տեսանք, որ անիկա կը պարտւնակէ փող մը : Մայրս հայերէնով հարցուց .

— Այդ ի՞նչ է, Գրիգոր :

Եւ Գրիգոր հայերէնով պատասխանեց, թէ փող մըն էր :

Որքան կը յիշեմ մենք ս'եր սր սպրած ենք՝ միշտ ունեցած ենք զաշնամուր մը: Կրային ժամանակներ, երբ ամիսներով ոչ սք կը մօտենար անոր եւ ապա, յանկարծ, ամէնքս կը նուազէինք անոր վրայ: Եւ ճայնանիչներով չէի կրնար նուազել, եւ չէի կրնար նուազել ունեկողերով, բայց յաջողած էի յորինել քանի մը եղանակներ, որոնցմէ կը թուէր, թէ չէի կրնար ձերբազատուիլ եւ որոնց կը վերադառնայի միշտ անարամազիւ: Իմ յուսարեկութեան մէջ սովոր էի կրցածիւ շափ ուժով զարնել զաշնամուրի ստեղծութեան, եւ միշտ անկէ հեռացուած էի քայրերէս մէկուսի կողմէ: Անոնք կ'ըսէին, թէ Լս խենթի մը պէս կը նուազէի: Չէի գիտեր, թէ ինչու կը փորձէի դաշնամուր նուազել, բայց ինծի կը թուէր, թէ այդ մէկը պէտք է ընէի: Ամէնքս սղջ էինք եւ ինծի կը թուէր, թէ բան մը պէտք է պատահէ: Եւ խորապէս հաւատացի տատր եւ երբ պատահեցաւ, որ ամէն բան նոյնը մնաց եւ մենք շարունակեցինք կրկին ու կրկին ընել նոյն բաները՝ կը զայրանայի եւ կը շուարէի: Յետոյ, անգամ մը եւս ամէնքս կը ինկայինք:

Եւ ահա մեր տան մէջ մենք կ'ունենայինք երաժշտական արիչ գործիք մը: Գրիգոր տուն բերաւ երաժշտական զբօսակալ մը եւ զիրք մը այն մասին, թէ ինչպէս պէտք է փող նուազել: Չեւով մը ան սորիեցաւ նուազել «Ամերիկա»-ի եւ «Իմ հին Քանթաքի տուն»-ի՝ պէս երգեր: Ան յաճախ կը ստիպէր, որ ստքի կանդնիմ, երբ ինք կը փորձէ «Ամերիկա» նուազել:

Երջահայ թագերուն մէջ բնակող ամէն սք զխոցաւ, թէ Գրիգոր փող մը ունէր եւ երբ փողոցին մէջ անոր հանդիպէին՝ իրարու կը փոխաւային. «Ահա ան կ'երթայ: Այս է այն ազան, որ կը բարձրացնէ այդ ամբողջ ազմուկը: Ան փող մը ունի եւ կը փորձէ նուազել սորիլ: Կը խորհէինք, թէ փողոցի կատուններն էին, սակայն կատունները նման ձայներ չէին հաներ ցերեկը»:

Ամէն ամառ փողոց նորոգող մեծ մեքենան կը վերադառնար ու շրջապատը կը լեցնէր իր պուժ-պուժ-պուժով: Անդիակաւ ծառին ընկոյզները գետին կ'իջնային եւ մենք տուփերու մէջ կը հատաքէինք զանոնք: Ամէն զարնան քոյրս գեղձենիի ծաղիկներ կը տեղաւորէր սեւ ծաղկամանին մէջ: Կեանքը կը շարունակուէր:

Օր մը, Գրիգոր ըսաւ.

— Որչա՞ծ եմ փողէն հրածարիլ: Չեմ կրնար նուազել:

Պտակցաւ զանդազօրէն եւ զգուշ, մտածեցի եւ քաջարար: Չորս-հինգ օր ետք, հեծիկով տուն եկա՝ քչերով նստասեղիէն վար իջած, որովհետեւ ստքերը վնասալիւսերուն չէին հասներ: Գրեթէ տառներկու տարեկան էր, բայց տարիքին համեմատ փոքրահասակ էր: Երբ մայրս տեսաւ, որ ան մեր փողոցն ի վեր զժուար քշելով եւ անկերպարան մարմնով կու զար, զուիթի ստաիճաններէն գէպի մայթ վաղեց:

— Այս ի՞նչ բերած ես ասին, — ըսաւ ան, — վա՛ր իջիր այդ խենթ հեծիկէն: Կ'ուրեւ քիչանդ՞մ մնալ մ'ինչեւ կեանքից փերջը:

Գրիգոր հեծիկը տարաւ անամերձի մէջ եւ սկսաւ անոր նստասեղը քսածցնելու փորձ ընել: Ես աշխատած էր եւ յաջողած էր նստասեղը ս-

առաւելագոյն չափով իջեցնել, բայց գետեւս անիկա շատ բարձր էր իրեն համար եւ ինք պէտք էր հեծիկը քշէր նոստատեղիէն վար լըմա՝ Երեկոյ մը, մայրս ներս առաւ հեծիկը եւ կըպիտի գոյն :

— Հայրդ, — ըսաւ ան Գրիգորին, — չիտակ կանակ մը ունի եւ մայրըդ չիտակ կոնակ մը ունի, եւ յատահ եմ, որ թայլ պիտի չտամ քեզի կորստամակ մնալ կեանքիդ մնացեալ օրերուն ընթացքին : Եթէ անհրաժեշտ է, որ հեծիկ քշես, նախընտրելի է, որ անհետս հատ մը ջու հասակիդ համեմտա :

Աւստի՝ Գրիգոր վաճառատուն վերադարձաց հեծիկը եւ գոյն փոխարինեց սղտիկով մը : Երբ վերջինին վրայ նոստա՞ վերադարձաւ՝ մայրս ըսաւ .

— Անիկա առելի յարմար է : Հիմա բանի մը կը նմանիս :

Շատ երկար շաբաթից հեծիկը Գրիգորէն առելի քշելու համայրս, որովհետեւ մենք ի վերջոյ կռիւի բռնակցանք : Նախապէս բախումներ ունեցած էինք, բայց վերջինը մեր մեծազոյն բախումն էր, որովհետեւ ալ մեծցած էինք : Երբ մայրս բաժնից մեզ, ըսաւ, որ երբեք սխալ չունենայինք հեծիկը, եթէ չզաւարեցնէինք կռիւր : Ես պայտի եւ կը խորհեմ, որ Գրիգորն ալ գլտց, որ հեծանիւր չէր մեր կռիւին շարժանիքի : Կը կտուէինք, որովհետեւ եզրայրներ էինք եւ որովհետեւ կը սիրէինք զիրար եւ որովհետեւ միասին եղած էինք շատ մը տարբեր բաներու մէջ :

Կերպը գոանք միասնարար գործածելու հեծիկը, անդէ անց փոխադրելով մէկու միւրը : Երբեմն ես կը տանէի Գրիգորը, բայց յաճախ ան դիւ կը տանէր : Արահեա մը բացած էինք փողոցի երկայնքին, որան վերջաւորութեան կար երեք կամ չորս ռաք երկարութիւն ունեցող գետափնեայ գոռիթով մը : Մենք սովոր էինք սկսիլ մեր տնամերձէն եւ որոշ արագութեան վրայ քշելէ ետք՝ կը սահէինք այդ գոռիթովին :

Օր մը, երբ այս ձևով կ'իջնէինք գոռիթովին, բան մը պատահեցաւ : Մեր հեծիկին անիւին յենարանը կտրեցաւ եւ առջեւի անիւը ծռեցաւ : Այնքան դանդաղօրէն պատահեցաւ տոբիկա, որ հազիւ զգայինք, եւ մինչ յենարանը կը կտրէր եւ անիւը կը ծռէր, թուեցաւ, թէ անձայրածիր երազ մը կ'ազատէինք : Թուեցաւ նոյնպէս, որ այս գէպքը մեծ եւ կարեւոր ղէպք մըն էր : Ծիծաղելի պէտք է նկատէինք գոյն եւ խնդայինք, բայց չկարծեցինք, թէ զուարճալի էր եւ չխնդայինք : Ասանց բաւ մը ըսելու՝ տուն վերադարձանք :

Մայրս պատահանէ մը վերահասու եղած էր պատահարին եւ երբ տուն մտանք արկածէն զրեթէ ցնցում՝ ըսաւ .

— Չէ՞ք անդրադառնար, աղա՛ք, թէ որքան մեծցած էք : Այժմ գուք շատ մեծցած էք՝ միտսին հեծիկի մը վրայ նստելու համար :

Յեամիջօրէին, մենք չխօսեցանք այդ մասին : Նստեցանք տունը՝ փորձելով կարդալ, փորձելով զգալ, թէ ամէն ինչ նոյնն է, թէ՛ միտսն մեր հեծանիւին յենարանն էր, որ կտրած էր, բայց գիտցանք, թէ ամէն բան նոյնը չէր : Երբեք նոյնը սխալ չըլլար կրկին : Ինծի թուեցաւ, թէ մենք մոռցած էինք մեր կեանքը, եւ թէ՛ այդ փոքր արկածին պատճառով այժմ կը վերջիւնէինք բոլոր մանրամասնութիւնները, որոնք կը նշէին մեր աճման հանդերձանները :

Յիշեցի այն Ժամանակը, երբ մայր մնաց, որ կորսնցնէի կեանքս դեռի մը մէջ, եւ Գրիգորը, որ լողալով օդնութեան հասաւ, հայերէնով վայրագօ-

ըէն պոտարով: Այն օրը, երբ Լաքին Վալլորսի իր գործը կորսնցուց եւ շտաբով մը լացաւ: Այն օրը, երբ Նալսմին հիւանդ էր եւ մենք աղօթեցինք, որ չմեռնի:

Եւ ես սրտի ցաւով յիշեցի այն օրը, երբ Վահան մօրեղբայրս զինուորական տարալով մեր ատնը եկաւ եւ նուազեց մեզի իր ջութակով: Երբա՞ն զուարթ էր մայրս, երբ Վահան նստաւ մեր սեղանը եւ սրբա՞ն լացաւ, երբ ան շողեկասքով հեռացաւ: Են յիշեցի այն բոլոր օրերը, երբ մայրս հայերէն թերթ կարդալու կը նստէր ու մեզի կը պատմէր Երկրին մէջ պատահած ապերձանկութեան, վիշտի եւ մահուան մասին:

Եւ ես յիշեցի այն օրը, երբ մենք տեղեկացանք, թէ մօրեղբայրս՝ Վահան, սպաննուած էր Ֆրանսայի մէջ եւ մենք բոլորս սեղան նստեցանք եւ չկրցանք ընթրիլ եւ անկողին մտնիք ու չկրցանք քնանալ, որովհետեւ ամէնքս կ'արտասուէինք ու կը խօսէինք անոր մասին:

Յիշեցի, թէ ինչպէս պատերազմի վերջին օրը օրաթերթը տառջին էջին վրայ տպեց մեր Տիրոջ նկարը եւ հետեւեալ բառերը.

«Նազադուքիւն աշխարհի, բարի մալք-անէքեր բոլոր մարդոց»:

Ինչպէս ասեւ վերապարձած էք, պոտարէն քաշուած ձայնով եւ ախար սրտով, որովհետեւ պատերազմը վերջ պատած ու Վահան մօրեղբայրս մեռած էր:

Ամբողջ յետմիջօրէին եւ գրեթէ ողջ գիշերը մեր տան մէջ խօսակցութիւն տեղի չունեցաւ: Կը պատրաստուէինք անկողին մտնել, երբ Գրեղսր բսաւ.

— Ծիծաղելի չէ՞, թէ ինչպէս հեծիկը կ'անրեցաւ մեր ծանրութեան ներքեւ:

Մայրս եւ քոյրերս ըսին, թէ ամենածիծաղելի տեսարանն էր, որուն նմանը երբեք չէին տեսած: Ու սկսան խնդալ: Նախ՝ թեթեօրէն խնդացին: Վայրկեան մը կ'ընդհատէին ինզուրք եւ ապա կը յիշէին, թէ որքան ծիծաղելի եղած է զէպքը եւ կրկին կը սկսէին խնդալ, բայց այս անգամ աւելի՛ բարձր: Գրեղսր սկսաւ իրենց հետ խնդալ: Գրեթէ այնպէս թուեցաւ, որ մեր աշխարհին մէջ ոչինչ ճիշդ էր, եւ թէ՛ մենք ախրելու ո՛չ մէկ պատճառ ունէինք: Քիչ մը ետք ես ալ սկսայ խնդալ: Այս բոլորը պատահած էին, եւ մենք զեւ մեր տան մէջ միտսին կ'ապրէինք: Մենք զեւ ունէինք մեր ծառերը եւ, ամբո՞ն՝ նորագոյ մեքենան կրկին պիտի գար ու պիտի լսէինք դաշն, եւ ձմերուկ ծախող ծեր մարդը պիտի անցնէր մեր տան սաջիւէն՝ իր կառքին մէջէն հայերէն «ձմերուկ» պոտարով: Ես երբեք ուրախ չզրուցի, բայց խնդացի ա՛յնքան, որ աչքերէս արցունք եկաւ:

Ապա, յանկարծ, արտակարգ բան մը պատահեցաւ, իմ մէջս պատահեցաւ, եւ միաժամանակ թուեցաւ, թէ նոյնը պատահեցաւ ողջ աշխարհի մէջ, քաղաքներու մէջ, երկրի երեսին, ամէնուրեք, ուր մարդիկ կային: Զրուցի, վերջապէս, թէ կեանքին մէկ մասն էի, վերջապէս զիտոցայ, թէ ինչպէս բոլոր իրերը կը հասնին իրենց յախճանին: Տարօրինակ, կսկծալի տիրութիւն մը սոցաց աշխարհի մէջէն, եւ կեանքին մէջ տառջին անգամ ըլլալով՝ ես անձնապէս դայն յտակօրէն զգացի: Այնպէս թուեցաւ, որ կարծես նոր ծնած եմ, եւ թէ՛ տառջին անգամ ըլլալով ես յոտակ պատկեր մը ունեցած եմ, պատկեր մը նոյնինքն աշխարհէն, մարդ մը՝ անոր վրայ, կեանքի, դեղեկելութեան եւ ցաւի, ուրախութեան եւ վախի ու տղեկութեան: Այդ ամէնը շտա յոտակ էին ինծի համար եւ ես հասկցայ, թէ ինչու նստած էի դաշնամուրին մօտ՝ գարնելով ստեղծերուն, թէ ինչու կուտած էի եղ-

բօրս՝ Գրիգորին հետ, եւ ինչու ամէնքս միասին խնդայօժ էինք. եւ որովհետեւ ոչքերս արցունքոտօժ էին, անկողինիս վրայ նստեցայ ու սկսայ լալ:

Առանց բառ մը բսելու՝ Գրիգորն ալ սկսաւ լալ եւ իրմէ հօք քոյրերս ալ սկսան լալ:

Մայրս ըստ հայերէնով.

— Լալը անօղուտ է: Մենք միշտ ունեցած ենք մեր գէշ օրերը, եւ միշտ ալք օրերը յազթահարած ենք ու պիտի յազթահարենք:

Երբ ենթադրաբար ամէնքս քնայօժ պէտք է ըլլայինք, անկողինէս ելլայ եւ գացի գէպի հիւրասենեակ բացուող գրան մօտ եւ բացի գայն: Տեսայ, որ մայրս դաշնամուրին վրայէն տեսմ է իր հպրօր լուսանկարը եւ զբաժ է գայն իր գիմայը՝ սեղանին վրայ. եւ ես լսեցի իր մեղմ հեծկրտուքը, եւ տեսայ գլխուն օրօրումը, այնպէս՝ ինչպէս կ'ընէին Երկրէն եկած մարդիկ:

ՈՒՒԼԵՐՈՒ ՍԱՐՈՅԵԱՆ

ՈՒՍՍՐՈՅԵԱՆ

ԲԱՐՁՐԱՐԺԷՔ

50 ԿԱՐՃ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

Համայնաբնույթին հուշակի մէք սմերիկացի, ռուս, անգլիացի, ֆրանսացի եւ նոյն թիւով այլ ազգերէ յիսուն գրողներ, որոնց 24ին անունները՝ կողքին վրայ, իսկ միւսներուն համար՝


«Եւ 26 այլ մեծ գրողներ»:

Եւ կողքի «ցուցափեղկին» վրայ ներկայացուած 24 գրողներուն տանընթացողը՝ ՈՒՍՍՐՈՅԵԱՆ, Հեմինգուեյի, Փոյի, Ֆոլքների, Ճոյի, Չեխովի ու Բիլիլինի անուններէն անմիջապէս ետք, ու առջ՝ Քոնրատէն, Հաքսլին, Մեյլին ու Սթոյնսթրէն:

Հասարկն կողքի վերջին երեսին արձանագրուած է նաև հետեւեալ գնահատանքը.

«Ոմի քէ միւքի սեսակետէն՝ ներկայացուած պատմուածքներուն այլազանութիւնը հսկայական է, այնուամենայնիւ, ումին հասարակաց կէտ մը — գրութեանց մնայուն որակը, որ կը դասէ գրանի հասարակարկային արձակի գլուխ-գործոցներուն շարքը»:

«Անուս Արամ է» հասարէն ընտրուած կտորը՝ «Գեղեցիկ սպիտակ ձիուն անտը» ծանօթ է նաև հայ իրականութեան, չորս տարբեր թարգմանութիւններով, վերջինը՝ Յովհաննէս Շէօճէլեանի կողմէ, դեղեցիկ էջ մը, զոր կը ներկայացնենք ստորեւ, զայն աննկար վերջին թարգմանիչին նոր լոյս ընծայած արքայական ստուար հասարէն:



ԳԵՂԵՑԻԿ ՍՊԻՏԱԿ ԶԻՈՒՆ ԱՄԱՌԸ

Յը մը, այն երանիկ հին ու չէն օրերէն, երբ ինք տարեկան էի եւ աշխարհ լի էր երեսակայելի տմէն կարգի հրաշայիքներով ու կեանքն ու տակաւին հաճելի եւ խորհրդաւոր երայ մը, մօրեցրօրորդիս՝ Մարտա, որ ինձմէ զատ բոլորին կողմէ խենթ կը նկատուէր, առաւօտեան ժամը շարսին մեր սանր եկաւ եւ արթնցուց զիս՝ սենեակիս յատմուար դարներով:

— Արամ՝:

Ընդատա վեր ցատկեցի անկողնէն եւ պտտահանէն զուրս նայեցայ: Աչքերուս չէի հաւատար: Աստուտ չէր սակաւին, բայց տմառ էր եւ քանի մտ մայրկիանէն յուսաբացը պիտի ձեղքուէր աշխարհի ծայրամասէն եւ բաւականին լոյս պիտի սկսէր, սրբեցի կարեկոյի հասկնայ, թէ անտաճա երայ չէր:

Մօրեցրօրորդիս Մարտա սքանչելի ձեղձակ ձիւ մը վրայ նստած էր: Գլուխ յատմուածն զուրս հանեցի եւ սկսայ աչքերս շրկել:



— Այր՛, — բառս սն հայելնն, — տեսածդ ձի է: Երազի մէջ չես: Աճաղարէ՛, եթէ կուզես ձի հեծնել:

Գիտէի, որ մօրեղբորորդիս Մուրառն ի վիճակի էր կեանքը աւելի բազմաշէն, քան սեւէ մէկը, որ սխարմամբ աշխարհ էկած էր, բայց ստիկաբան մըն էր, սրտն նոյնիսկ Մո չէի կրնար հաւատալ:

Նախ եւ առաջ իմ կանխադրոյն յիշողութիւններս ձիերու հետ կապուած էին եւ միշտ անոնց վրայ հեծնելու բուռն աննշ մը ունեցած էի:

Ասիկա ցանկութեանս հրաշայի մասն էր:

Երկրորդ՝ մենք աղքատ էինք:

Ասիկա այն մասն էր, որ ինձի չէր արտօներ, որ տեսածիս հաւատայի:

Մենք աղքատ էինք: Գրամ շունէիք: Մեր ամբողջ առհմը ծայրայեղ աղքատութեան կը տառապէր: Գարաօղբանեաններս զերդատանին իւրաքանչիւր ճիւղը աշխարհի ամէնէն անհեթեթ եւ ճիճագաշարժ չքաւարութեան մէջ կ'ուղարէր: Ոչ ոք, նոյնիսկ մեր ընտանիքին սարեց սնդամները ի վիճակի էին հասկնալու, թէ ուրիշ՝ եւ ի՞նչուս բաւարար դրամ կրնայինք ձարել մեր սառմնքը ուտելիքով լեցնելու համար: Ամէնէն կարելուք ա՛յն էր, որ մենք համբաւուր էինք մեր սրբիւնչաւթեամբ: Մեր ապնուսթիւնը ծանօթ էր բոլորին՝ տանակէ դարեքէ ի վեր, նոյնիսկ այն տանն, երբ ամէնէն հարուստ ընտանիքը կը համարուէինք երկրի մը մէջ, եւ կ'ուզէինք հաւատալ, թէ անիկա ամբողջ աշխարհն էր:

Մենք նախ հպարտ էինք, յետոյ՝ պարկեշտ, եւ սակէ զոտ՝ կը հաւատայինք ճշմարիտին, եւ սուտի՝ դադարութիւն: Մեզմէ սեւէ մէկը աշխարհի մէջ ուրիշ անձ մը չհասարկածն էր, ո՛ւր մնաց զսպառնութիւն ընել:

Հետեւարար, թէեւ ես ձին կը տեսնէի, այնքա՛ն հրաշայի, թէ եւ կը զղայի անոր հօտը, այնքա՛ն բարամիտակտ, թէ եւ կը լսէի անոր շնչաւթիւնը, այնքա՛ն գլխիւն, բայց չէի կրնար հաւատալ, որ ձին սրեւէ կապ կրնար ունենալ իմ մօրեղբորորդի Մուրառնի կամ ինձի կամ մեր ընտանիքի քան թէ արթուն սեւէ անդամին հետ: Քանի որ մօրեղբորորդիս Մուրառն կարող չէր ձին դնած բլլալ եւ եթէ ի վիճակի չէր դնած բլլալ, ուրեմն պէտք էր գոյցած ըլլար զայն: Բայց ես չէի կրնար հաւատալ, որ սն կրնայ գոյցած բլլալ զայն:

Գարաօղբանեան ընտանիքի անդամներէն ո՛չ մէկը կրնար գող ըլլալ եւ զսպառնութիւն ընել:

Նախ՝ մօրեղբորորդիս, յետոյ՝ ձիուն նայեցայ: Անոնցմէ իւրաքանչիւրին մէջ կար անմեղ հանդարտութիւն եւ զուարթախոհութիւն, որ թէ՛ կ'ուրախացնէր եւ թէ՛ կը վախցնէր զիս:

— Մուրառն, ուրիշ՞ գոյցար այդ ձին, — հարցուցի ես:

— Եթէ կ'ուզես ձի հեծնել, պատուհանէն դա՛ւրս նետուէ:

Ուրեմն ճիշդ էր: Ան գոյցած էր ձին: Տարակոյս չկար: Ան էկած էր հրաւիրելու զիս հեծնելու կամ ոչ, ինչուս որ կ'ուզէի:

Լաւ, ինձի աշնակէս կը թուէր, թէ հեծնելու համար ձի մը դողնար ուրիշ բանի մը, օրինակ, գրամ գողնալուն չէր նմաներ: Ես համոզուած էի, որ ստիկա կարելի չէր նոյնիսկ զսպառնութիւն համարել: Եթէ զուն ձիերը Մուրառնի եւ ինձի պէս խեղճանալու սատիճան սիրէիր, կ'զոճը զսպառնութիւն չէիր համարեր: Ասիկա զսպառնութիւն պիտի համարուէր, եթէ ձին ծախելու ելլէինք, բան մը, որ անշուշտ եւ գիտէի, թէ երբեք պիտի չընէինք:

— Սպասէ, որ հայտնաներս հասնիմ:

— Կա՛ւ, բայց աճապարէ՛ :

Ես փութով հաղաւտներս հողայ, լուսամասէն բակը նկատեցայ, ցատկեցի ձիուն կանակը եւ մօրեղբորորդիս ետեւ տեղաւորուեցայ :

Այդ տարի քաղաքին ծայրամասը՝ Վայրնի՛ փողոցին վրայ կը բնա-  
կէինք : Մեր տան ետեւէն կը սկսէին տրտեր, այլիներ, մրգաստաններ, ու-  
սուգումքի ջրանցքներ եւ գէպի գիւղերը տառջնարգոյ ճամբաներ : Երեք վայր-  
կեան չանցած՝ հասանք Օյիւ փողոցը, ուր ձին սկսաւ տրտէկ : Օդն անուշ  
էր եւ գոյն չնշէին այնքա՛ն հաճելի : Զիտն փաղքը զգալ հրաշայի էր : Մու-  
րաս, որ մեր գերդաստանին ամէնէն խենթ անդամներէն մէկը կը համար-  
էր, սկսաւ երգիլ, աւելի ձիւզը՝ սկսաւ դառալ :

Ամէն բնասնիք խենթութեան երակ մը կ'ունենայ : Մօրեղբորորդիս  
Մուրաս մեր ասճմին այլ խենթ երակին բնական շտաախը կը նկատուէր :  
Այդ մտքին մէջ միայն Խարով մօրեղբորս կը գերազանցէր զինք : Խոս-  
բով՝ սեւ սասա մապերով, հաճիւզ զլախով, Սան ճափաքի հովիտին մէջ  
ամէնէն թաւ պիտերը ունեցող վիթխարի հսկայ մըն էր եւ բնուորութեամբ  
սննքան գիւրարարութ, այնքան վայրայ գե այնքան անդուսպ էր, որ չէր  
փարաներ սեւէ մէկուն խօսքը ընդհատել զոտարով՝ «Վնաս չունի, կարեւո-  
րութիւն մի՛ տար բաժնին» :

Միւսնայն յանկերզը կը կրկնէր, հոգ չէ թէ՛ սչինչ բանի մը մասին  
խօսէր : Անգամ մը Խարովին որդին՝ Արաք, ութ թաղամաս փայելով հասաւ  
ստիբչատուն մը, ուր իր հայրը պիտերը յարգարել կու սար, իմացնելու,  
որ իրենց տանը հրդեհի բնուած էր : Խարով շակուեցաւ իր բողկաթուին  
մէջ եւ բղաւեց. «Վնաս չունի, կարեւորութիւն մի՛ տար ատոր» : Սակայն  
ստիբիչը միջմտեց եւ ըսաւ. «Ա՛յ մարգ, աղան կ'ըսէ, թէ ձեր տունը կրակ  
տա՛ծ է» : Այն ստեհն Խարով գարձաւ ստիբիչին եւ դուսայ. «Կը բաւէ՛, ես  
կ'ըսեմ թէ՛ վնաս չունի՛» :

Մօրեղբորորդիս Մուրաս այս մարդուն բնական շառախը կը նկատ-  
էր, հակառակ անոր, որ Մուրասին հայրը՝ Զօհրապ, գործնական եւ հան-  
գարտարարոյ մարդ մըն էր : Կացութիւնը այս էր մեր ասճմին մէջ : Մարդ  
մը կրնար հայրը ըլլալ իր գաւազին մարմնին, միտին ու ոսկորին, բայց  
այդ չէր նշանակել, որ հայրն էր նաեւ անոր հողիին : Հողեկան խառնը-  
ւածքներու բաշխումը մեր գերդաստանին մէջ ի սկզբանէ եղած էր քմահաճ :

Մինչ մենք կը ձիավարէինք, մօրեղբորորդիս Մուրաս կ'երգէր, կար-  
ձեւ թէ մեր հին հայրենիքը եղած ըլլայինք եւ, ըստ կարգ մը հարեաննե-  
րու կարծիքին՝ մենք հին հայրենիքին կը պատկանէինք, որովհետեւ շա-  
բան փոխուած չէր մեր սուրբախերային մէջ :

Ի վերջոյ Մուրաս ըսաւ .

- Վա՛ր իջիր ձիէն, կ'ուզեմ ասանճին քչել :
- Պիտի արտօնե՞ս, որ ես ալ միմակ ձիավարեմ, — հարցուցի ես :
- Ասիկա ձիէն կախում ունի : Հիմա ձիէն իջի՛ր, — պատասխանեց մօ-  
րեղբորորդիս :
- Զին պիտի թողո՞ւ, որ հեծնեմ, — հարցուցի ես :
- Տեսնենք, — պատասխանեց ան, — մի մտնար, որ ձիու հետ վար-  
ւելու իմ խրայատուկ կերպը տնիմ :
- Զիտ հետ քու անեցած վարուելու ձեւը ես ալ գիտեմ :
- Պահ մը, քու աղահալութեանդ սիրոյն, հաւասանք, որ ըսածդ  
ձիւզ է : Հիմա վար իջի՛ր, — ըսաւ Մուրաս :

— Շատ յաւ, բայց մի մտնար, պիտի թաղուս, որ մինակ հեծնեմ :  
 Ես վար իջայ ձիէն, Մուրաւ կրտսէիներով խթանեց ձին եւ գտայ :  
 — Վաղէ՛, սուրա՛ :

Ձին կանդնեցաւ իր ետեւի սաքերուն վրայ, խրխնջաց եւ դէպի տաջ սուբայ ահեղ թափով եւ կառայի արտաբեկամբ : Ես ապէ տեսիլի դեղեցիկ բան չէի տեսած կեանքիս մէջ : Մօրեղբորս ձին քշեց չոր խաւով ծածկըւած գաշախ մը մէջէն մինչեւ ստոյգումի խրամտար, ստուծ ըրաւ անոր վրայէն եւ, հինգ բողէ ետք՝ վերադարձաւ քրանոթնար ու շնչապառ :

Արեւը ծայրած ու սկրած էր բարձրանալ :

— Հիմա իմ կորզոս է, — բախ ես :

Մօրեղբորս Մուրաւ ձիէն վար իջաւ :

